

ԱՆԳԱՐԱ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ Ուրբաթ օր յայտնաձեռնեց «մեծ» հալածականությունը կայ, որ հիւսիսային կիպրոսը թուրքերի միասնաբար Երբ Երրոպական Միությունը բաժնուրած կղզին անհրաժեշտ ընդունի՝ յոյն կիպրացիներուն հետ համաձայնութեան մը գոյացումէն առաջ:

Տենքթաշ Անգարա կը գտնուէր ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի յառաջիկայ շաբթուան Նիկոսիա այցելութեան նախօրեակին: «Թուրքերու եւ յոյներու միջեւ հաւասարակշռութիւնը կենսական է: Ե. Միությունը կամ ռեւէ մէկը, որ կ'ուզէ վերջ տալ ասոր, աղէտ կը հետապնդէ», ըսած է ան թղթակիցներու:

ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊՈՒՆԻՆ ՅԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ



Զօր. Լահուտ կ'ընդունի դեսպան Պէթըլը:

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ քննարկեց շրջանային եւ միջազգային վարձագումները, անոնց գծով արաբական բեմին վրայ շարժումները եւ Միացեալ Նահանգներու կեցուածքը Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պէթըլի հետ:

Տեսակցութեան տեղ Պէթըլ ըսաւ, որ նախագահ Լահուտի փոխանցած է, թէ Ուաշինկթընը բարձր կը գնահատէ նախանցեալ օր Թրիփոլիի մէջ պատահած պայթուումի վերաբերեալ դեսպանատան եւ պաշտօնակազմի նուժերուն միջեւ արագ եւ սերտ գործառնութիւնը:

«Նախագահ Լահուտի հետ նաեւ խօսեցանք շրջանային վիճակին մասին, եւ քննարկեցինք Ուաշինկթընի, Մոսկուայի, ՄԱԿի եւ Երրոպական Միութեան միջեւ սերտ համակարգումը, ինչպէս նաեւ՝ շրջանի ղեկավարներուն հետ խորհրդակցութիւնները, զորս կը յուսանք, որ կը յանգին այս ամառ շրջանի խաղաղութեան նուիրում խորհրդածոյցի մը գումարումին, որովհետեւ նման ժողով մը կրնայ օգնել լուծումներ գտնելու Միջին Արեւելքի հարցերուն», ըսաւ ան:

Պէթըլ նշեց, որ միաժամանակ աշխատանք պիտի տարուի ոչ միայն ապահովական, այլ նաեւ քաղաքական, տնտեսական եւ մարդասիրական բնոյթի հարցերու լուծման համար:

Նախագահ Լահուտ նաեւ ընդունեց լիբանանեւրոյթեան խորհրդարանական բարեկամութեան պատուիրակութիւնը, գլխավորութեամբ քուէյթի երեսփոխան Ահմէտ Ապտալա Ռապաիի:

Քուէյթի էմիրին ողջունելու փոխանցելով՝ Ռապաիի դրուստութիւնը խօսեցաւ Պէթըլի արաբական վեհաժողովը գլխավորած նախագահ Լահուտի դերակատարութեան մասին, ընդգծելով Իրաքի մօտ քուէյթի գերիներուն վերաբերեալ որոշումները գործադրելու անընդամենը յանձնարարութիւնը:

Նախագահ Լահուտ, երկու երկիրներու յարաբերութիւններուն համար գոհունակութիւն յայտնելով, իր ողջունները փոխանցեց Քուէյթի էմիրին ու գահաժառանգին:

Վեհաժողովի որոշումներու գործադրութիւնը հետապնդելու իր նախանձախնդրութիւնը վերահաստատելով՝ նախագահ Լահուտ ընդգծեց անհրաժեշտութիւնը ամրապնդելու միջառաքական միասնութիւնը, մասնաւորապէս Պաղեստինի դէպքերուն եւ իսրայիլեան կեցածքներուն յոյսին տակ:

«Ի՞նչ խաղաղութեան մասին կը խօսին եւ ժողովներ կը կազմակերպեն, երբ Իսրայիլի վարչապետը պաղեստինցիներուն դէմ իր կողմը շարունակելով՝ կը վերահաստատէ որ իր հետ խաղաղութիւնը անկարելի է», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց Փաղեստինի Կուսակցութեան նախկին նախագահ Մուսիբ Կամի այցելութիւնը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲ

ՄԵՍՐՈՊ Բ. ԱՆԹԻԿԻԱՍԻ ՄԷՋ

Երէկ երեկոյան Անթիպիա ժամանեց Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ Բ. Մուկեթեան: Պատրիարքը օդակայանի պատուոյ հիւրասրահին մէջ ընդունուեցաւ միաբանութեան անդամներու կողմէ, ապա Մայրավանք ժամանելով՝ «Հրաշք-փառ»-ով մուտք գործեց Անթիպիայի Մ. Գրիգոր Լուսաւորելի Մայր տաճարը: Վեհապատրիարքին Արամ Ա. կաթողիկոս, շրջապատուած միաբան հայրերով, ղեկավարեց պատրիարք սրբազանը եւ ապա անոնք կարճ գրոյց մը ունեցան վեհաբանի դահլիճին մէջ:

Պատրիարք սրբազանը իրեն վեհապատրիարքութեան հիւրը քանի մը օր պիտի մնայ Անթիպիայի մէջ եւ ներկայ պիտի գտնուի յառաջիկայ Կիրակի Անթիպիայի Մայր տաճարին մէջ կատարուելիք ձեռնադրութեան:

ԲԵԹՂԵՎԵՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ 380ՐԵԱՅ ՏԱԳՆԱԴՊԸ ԻՐ ԱԻԱՐՏԻՆ ՐԱՍԱԻ ՇԱՐՈՆ Կ'ՈՒՉԷ ՋՈՒՐԻ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ

Բեթղեւէմի Ս. Ծննդեան եկեղեցւոյ տաճարային աւարտեցումը երէկ, երբ հոն ապաստանած զինեալներուն մասին համաձայնութիւն մը գոյանալէ ետք անոնք դուրս եկան ու Կիպրոս եւ կազա ուղղուեցան: Եկեղեցիին պարպուածով վերջ կը գտնէր 380րեայ տաճարը:

Պաղեստինցիներէն տասներեք օդանաւով Կիպրոս փոխադրուեցան, ուրիշ պիտի աքսորուին զէպի այլ երկիր մը, որ ցարդ յայտնի չէ: Պաղեստինցիներուն ընկերակցեցան բրիտանացի եւ կիպրացի զինուորականներ: Լաւնաքայի օդակայանէն անոնք օթովիւսով փոխադրուեցան պանդոկ մը, մինչեւ որ որոշուի աքսորի երկիրը, որ զանոնք պիտի ընդունի: Իսրայիլի կողմէ ահաբեկիչներ նկատուող պաղեստինցիներէն մէկը հիւանդանոց փոխադրուեցաւ: Մնացեալները ապահովու-



Պաղեստինցի երիտասարդ մը ջերմօրէն կը դիմաւորուի Կազայի մէջ, Բեթղեւէմի Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ դուրս գալէն ետք:

թեան իստ միջոցառումներու ներքեւ պիտի մնան պանդոկին վերջին յարկը: Նիկոսիա գտնուող պաղեստինցի

ղիւանագէտներ անմիջապէս պանդոկ ուղղուեցան այցելութիւն մը տալու համար աքսորեալներուն: Պաղեստինցի

դեսպան Սամիր Ապու Ղազալէ շնորհակալութիւն յայտնեց Կիպրոսի կառավարութեան, որ հիւրընկալած է պաղես-

տինցիները: Ապու Ղազալէ աւելցուց, որ աքսորեալները հանգիստ են ու անոնց տրամադրութիւնները բարձր: «Անոնք կը հաւատան, որ շուտով հայրենիք պիտի վերադառնան», ըսաւ դեսպանը:

Երրոպական դիւանագիտական աղբիւրներ յայտնեցին, որ Իտալիա, Սպանիա եւ այլ երկիրներ պատրաստակամութիւն յայտնած են ընդունելու քանի մը պաղեստինցի: Փորթուգալի արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց, որ վարչապետը պատրաստակամութիւն յայտնած է ապաստան տալու մէկ պաղեստինցի:

Բեթղեւէմի Ս. Ծննդեան եկեղեցին ապաստանած 26 այլ պաղեստինցիներ կազա ժամանեցին, ուր Հերոսոսեբուս վանքի ընդունելու թեան արժանացան: Իսրայիլեան բանակի օր-

Շաբ.՝ էջ 10

ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿԶՈՒԹԻՒՆԸ ՍՊԱՌՆԱԼԻՔ Է ՀԱՄԱՇ ԽԱՐ ՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ

Խրուաթիոյ մայրաքաղաք Չաղբեպի մէջ 9 Մայիսին սկսաւ եւրոպական խորհրդարաններու եւ խորհրդարանական վեհաժողովներու խորհրդածոյցը: Այս ժողովին կը մասնակցին 44 երկիրներու խորհրդարաններու նախագահներ, որոնց շարքին՝ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Սաչատրեան: Խորհրդածոյցի նիւթն է «Ժողովրդավարութիւնը ընդդէմ ահաբեկչութեան. ազգային ռազմավարութիւններ»: Խորհրդածոյցին բացումը կա-

տարեց Խրուաթիոյ խորհրդարանի նախագահ Չլաքքօ Տոմէիչ: Սպանիոյ Ծերակոյտի նախագահի ելոյթին ետք, խօսք առաւ Ա. Սաչատրեան, որ ողջունելէ ետք խորհրդածոյցի կազմակերպիչները եւ մասնակիցները, յայտնեց, թէ միջազգային ահաբեկչութիւնը վտանգաւոր սպառնալիք է համաշխարհային հանրութեան, եւ թէ ահաբեկչութեան դէմ պայքարը նախելաւոր պայքար է յանուն

Շաբ.՝ էջ 10

ՔԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԱՆԳԱՐԱ ՄԻԱԼ ՊԵՏՔ ՉԷ ՄԵԿՆԱԲԱՆԷ ՊՐԻԻՔՍԵԼԻ ՄԷԿ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆԳԱՐԱ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Երրոպական խորհրդարանի երեսփոխաններ Ուրբաթ օր Անգարայի կողմէ ընդունեցին, որ «սխալ ձեւով չգործածէ» Պրիքս-սէլի մէկ որոշումը՝ ՔԱԿԻ «ահաբեկչական» խմբակներու ցանկին վրայ աւելցնելու,

Թուրքերի ջրտակաւ միակ օրինական կուսակցութեան գործունէութիւնը արգիլելով: Ժողովուրդին ժողովրդավար կուսակցութեան (ՀԱՏԷՓ) գործունէութիւնը կրնայ արգիլել այն ամբաստանու-

տիստանի Աշխատաւորական կուսակցութեան անդամներու հետ կապեր կը պահէ: Երրոպական Միութիւնը անցեալ շաբթի ՔԱԿԻ աւելցուցած էր «ահաբեկչական» արգիլ-

Շաբ.՝ էջ 10

ՐԱՏ ԲԱՍԱԼ ԽԱՐԱԶԻ

ԹԵՀՐԱՆ – ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՐԳԵԼԱԿՈՂ ՈՉ ՄԷԿ ՊԱՏՃԱՌ ԿԱՅ

ՆԻԻ ԵՈՐԸ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարազի յայտնած էր, թէ որեւէ պատճառ չկայ, որ կ'արգիլէ իր երկրին Մ. Նահանգներու հետ յարաբերութիւններ ունենալ, մինչեւ այն առեւ, որ անոնք փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած կ'ըլլան: Ան թղթակիցներու յայտնած է, թէ տեղեակ չէ երկու երկիրներուն միջեւ

զաղտնի բանակցութիւններու մասին, որոնք, ըստ Իրանի խորհրդարանից արտաքին հարցերու յանձնարարութեան նախագահ Մոհսէն Միրտամատիի, տեղի ունեցած են: Միրտամատիի խօսքերը կը հակասէին արտաքին գործոց նախարարութեան հերքումներուն, ինչ կը վերաբե-

Շաբ.՝ էջ 10

ՅԱԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՅԱՄԱՐ

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ԳԼԽԱԻՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՄԵԿՆԻ ՄՈՍԿՈՒԱ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 13 Մայիսին պիտի մեկնի Մոսկուա, մասնակցելու Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի (ՀԱՊ) մասնակից պետութիւններու Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի (ՀԱԽ) յոբելեանական նստաշրջանին:

Շաբ.՝ էջ 10

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ԱՐԴԻԻՆԱԻՏ ԿԸ ՀԱՄԱՐԷ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ վերադարձաւ Հարաւային Ամերիկա կատարած իր այցելութենէն: «Զուարթնոց» օդակայանին մէջ լրագրողներու հետ կարճ հանդիպումի մը ընթացքին նախագահ Քոչարեան զրակաւ եւ արդիւնաւէտ գնահատեց Արժանթին, Ուրուկուէյ եւ Պրագիլ կատարած իր այցելութիւնները: Ան յատկապէս կարեւոր նկատեց Պրագիլի մէջ կայացած բանակցութիւնները եւ

Շաբ.՝ էջ 10

ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ԴԷՄ ԽԱՓԱՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մայիս 9ին, առաւօտեան ժամը 3:00ի մօտ, խափանարարական արարք մը կատարուած է Բրիտանիոյ մէջ Հայաստանի դեսպանատան դէմ: Անժամօրէն դեսպանատան ուղղութեամբ նետուած են «Քոքթէյլ Մոլոտով» մը, որ փշրելով դեսպանատան պատուհաններէն մեկուն ապակին՝ հրդեհ պատճառած է դեսպանատան սենեակներէն մեկուն մէջ: Քաղաքի համապատասխան ծառայութիւնները շուտով մարած են հրդեհը, որ նիւթաւանդ մեծ վնաս չէ պատճառած: Որեւէ կողմ չէ ստանձնած արարքին պատասխանատուութիւնը:

Բրիտանական իշխանութիւնները պիտոսանք յայտնած են միջադէպին առնչութեամբ եւ հաւաստիացուցած են, որ պիտի դիմեն անհրաժեշտ բոլոր միջոցներուն՝ յանցագործները բացայայտելու եւ յառաջիկային նման արարքներ կանխարգիլելու համար: Բրիտանական ոստիկանութիւնը բացած է հետաքննութիւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ Ի ՊԱՏԻՒ ՍՈՒԼԻՏԵՐԻ ԴԱՐՅԵՐՈՎ ԶԲԱՂՈՂ 3ԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ



Երեկ՝ Ուրբաթ, 10 Մայիսի երեկոյան ժամը 8:00ին, Պէյրուսի Ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ ի պատիւ Սոլիտերի հարցերով պարզող և պանոսք հետապնդող յանձնախումբին:

Այս առիթով արտասանած շնորհակալական իր խօսքին մէջ թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան ըսաւ, թէ Քաղաքական ժողովը այս հանդիպում - հիւրասիրութիւնը կազմակերպած է Սոլիտերի հետ առաջնորդարանին ունեցած հարցերու լուծման համար ուղղակի և անուղղակի բոլոր անհատներուն շնորհակալութիւն յայտնելու համար:

Արքայան հարկը նշեց, թէ 1993 - 94 թուականներուն ծագած և անցեալ տարուան ընթացքին իրենց բարեք լուծման հասած այս հարցերը չէին կրնար նուազագոյն վնասով լուծման յանգիլ, եթէ յանձնախումբն ու կամաւորապէս աշխատած անձերը միասնաբար չաշխատէին և լրջօրէն հարցերը չհետապնդէին:

Գեղամ եպս. Խաչերեան ըսաւ, թէ Սոլիտերի հետ առնչուող աշխատանքի առաջին բաժինը արդէն հասած է իր արտոնին և կը մնայ երկրորդ մասը՝ գործնական ու շինարարական բաժինը:

Իր խօսքի ամառտին ան կրկին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք որեւէ ձեւով օժանդակեցին այս հարցի լուծման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՅՐՈՒԹ

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սիրելի հայրենակիցներ, Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետութեան կրթութեան և գիտութեան նախարարութիւնը նախաձեռնել է հիմք դնել միջազգային օլիմպիականի հայոց լեզուից և հայ գրականութեանը:

Հայոց լեզուի մեր ժողովրդի ձակարակող մէջ միշտ էլ առանձնայատուկ դեր է խաղացել, քանի որ մեր գոյութեան պայքարը նաեւ լեզուի պահպանման պայքար է եղել: Մեր լեզուն մեր պատմութիւնն է, մեր գոյութեան հիմքը, մեր մշակութային մեծագոյն հարստութիւնը: Օլիմպիականի անցկացումը, կարծում ենք, կը նպաստի հայոց լեզուի պահպանմանը, մէկ անգամ էս կը կարելոյրի նրա դերը: Այն կարող է նպաստել նաեւ տաղանդաւոր, շնորհալի և ստեղծագործական կարողութիւններով օժտուած երիտասարդների յայտնաբերմանը, Հայաստան - Սփիւռք յարաբերութիւնների զարգացմանը, Հայաստանի և Սփիւռքի երիտասարդների՝ հայոց լեզուի և հայ գրականութեան իմացութեան խորացմանը:

Օլիմպիական կ'անցկացուի Հայաստանի Հանրապետութեան կրթութեան և գիտութեան, արտաքին գործերի նախարարութիւնների, Գրողների Միութեան, Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի լեզուի և գրականութեան ինստիտուտի, լեզուի պետական տեսչութեան և Երեւանի Պետական համալսարանի կողմից՝ Ապրիլ - Հոկտեմբեր ամիսներին:

Օլիմպիական կ'անցկացուի հայոց և հայ գրականութիւնից՝ երկու փուլով (արեւմտահայերէն և արեւելահայերէն՝ ըստ մասնակցի ցանկութեան): Առաջին փուլն անց է կացուելու տեղերում (երկու մակարդակով՝ տարրական և բարձրագոյն), որի յաղթողները կը մասնակցեն Հոկտեմբերի 7ից 14ը Հայաստանում կայանալիք ամփոփիչ 2րդ փուլին:

Օլիմպիական կարող է մասնակցել 15ից 19 տարեկան պատանիները՝ աշխարհի բոլոր երկրներից, որոնք ունեն համապատասխան պատրաստութիւն: Յաղթողների համար սահմանուել են յատուկ մրցանակներ: Հայաստանում Օլիմպիականի 2րդ փուլի մասնակցների կեցութեան և շրջապատութեան բոլոր ծախսերը կը հոգայ կազմկոմիտեն:

Օլիմպիականի առաջին փուլի հարցաթերթիկների մուտքն ուղք կարող էր ծանօթանալ Հայաստանի կրթութեան և գիտութեան նախարարութեան ինտերնետային էջում՝ www.edu.am հասցեով, ինչպէս նաեւ կարող էր ստանալ Հայաստանի դեսպանութիւնից:

Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնը տեղեկացնում է, որ հայոց լեզուից և հայ գրականութիւնից առաջին համաշխարհային օլիմպիականի լիբանանեան առաջին տարրական փուլն անցկացուելու է Լիբանանի բոլոր հայկական երկրորդական վարժարաններում ս/թ. Մայիսի 10ին, ժամը 12:00ին: Երկրորդական վարժարանների բոլոր սաները մասնակցում են իրենց վարժարաններում, իսկ միւս ցանկացողները մինչեւ առաջին փուլի օրը կարող են արձանագրուել վարժարաններից որեւէ մէկում և այդտեղ մասնակցել առաջին փուլին:

Մաղթում ենք յաջողութիւններ: ԼԻԲԱՆԱՆՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ

ՄԵԹՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԲՈՒԷԱՐԿՈՂՆԵՐՈՒՆ ԿԵԴՐՈՆՆԵՐԸ ՃՇԴՈՒԵՑԱՆ

Ներքին գործոց նախարար էլիաս Մըր երէկ հրապարակուած որոշումով մը 2 Յունիսին Մեթնի մէջ կայանալիք մասնակի երեսփոխանական ընտրութիւններուն համար ճշդեց 334 ընտրական կեդրոն:

Այս ծիրին մէջ հայ բուէարկողներուն համար նախատեսուած են հետեւեալ կեդրոնները:

- Ժրտէյտէ, Էհրամճեան վարժարան, թիւ 1 սենեակ՝ հայ առաքելական և հայ կաթողիկէ:
- Պաուլըրիէ, Էհրամճեան վարժարան, թիւ 2 և թիւ 3 սենեակներ, հայ առաքելական, հայ կաթողիկէ և հայ աւետարանական:
- Սըտ էլ Պաուլըրիէ, Էհրամճեան վարժարան, թիւ 4 սենեակ:

• Անթիլիաս, Ֆինիքա վարժարան, թիւ 1 և 2 սենեակներ:

• Պուրճ Համուտ՝ Մեսրոպեան, Շամլեան -Թաթիկեան, Սրբոց Գառասնից Մանկանց, Արզարեան, Աքսոր Գասարճեան և Մար Եուսէֆ վարժարաններուն մէջ:

• Պէյթ Մէրի, պետական երկրորդական վարժարան, թիւ 2 և 3 սենեակներ, առաքելական և կաթողիկէ:

• Ժէլ էլ Տիպ, պետական երկրորդական վարժարան, թիւ 3 սենեակ, առաքելական և կաթողիկէ:

• Սին էլ Ֆիլ, պետական վարժարան թիւ 2, 3 և 7 սենեակներ, առաքելական և կաթողիկէ հայեր:

• Սին էլ Ֆիլ, Բաղաբապետարան, թիւ 1 սենեակ, հայ առաքելական:

ՊԸՐՐԻ Ա. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԸ ՀԱՄԱՐԷ ՆՈՒԱՍՏԱՑՈՒՑԻՉ

Խորհրդարանի նոր Բեթղեհեմի Ս. Ծննդեան եկեղեցիին իր երէկ դիտել տուաւ, տազնապին նուաստացուցիչ լուծումը նախանշան է Պաղեստինի երկրորդ աղետի մը, և Շարունի կառավարութեան ծրագրած տեղափոխութիւն կոչուած տեղահանութեան ծրագիրին:

«Պաղեստինի մէջ պատահածը, և գործողութիւններու ծիրը ընդարձակելով՝ Լիբանանի և Սուրիոյ դէմ յարձակումներու սպառնալիքները, անցած են իսրայէլեան պետական ահաբեկչութեան սահմանը և վերածուած՝ արաբ ազգին դէմ միջազգային պաշտօնական ահաբեկչութեան», ըսաւ Պըրրի:

«Պաղեստինի արաբ ազգի պաշտպանութեան առաջին գիծն է, և անոր պաշտպանութեան հրամայականը անտեսելով՝ անպաշտպան պիտի դառնան արաբական բոլոր մայրաքաղաքները. ուստի կոչ կ'ուղղենք արաբներուն և առաջին հերթին իրաւանցիներուն՝ մերժելու պաղեստինցիներուն դէմ աքսորի կամ արտաքսումի ամէն անհատական կամ հաւաքական միջոցառում և կառչած մնալու պաղեստինցի ժողովուրդի տունդարձի իրաւունքին», եզրափակեց Պըրրի:

ԵՐԻՏՐԱՎՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՍՆԱԿՐՈՒԹԵԱՆ ՄԱՐՁԵՐՈՒՆ ՄԵՉ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԺԱՆԱՊԻ ԲՆԱՐԿԵՑԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Երիտասարդութեան և մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իրաքի դեսպանատան գործաւար

նոր Բեթղեհեմի Ս. Ծննդեան եկեղեցիին իր երէկ դիտել տուաւ, տազնապին նուաստացուցիչ լուծումը նախանշան է Պաղեստինի երկրորդ աղետի մը, և Շարունի կառավարութեան ծրագրած տեղափոխութիւն կոչուած տեղահանութեան ծրագիրին:

«Պաղեստինի մէջ պատահածը, և գործողութիւններու ծիրը ընդարձակելով՝ Լիբանանի և Սուրիոյ դէմ յարձակումներու սպառնալիքները, անցած են իսրայէլեան պետական ահաբեկչութեան սահմանը և վերածուած՝ արաբ ազգին դէմ միջազգային պաշտօնական ահաբեկչութեան», ըսաւ Պըրրի:

«Պաղեստինի արաբ ազգի պաշտպանութեան առաջին գիծն է, և անոր պաշտպանութեան հրամայականը անտեսելով՝ անպաշտպան պիտի դառնան արաբական բոլոր մայրաքաղաքները. ուստի կոչ կ'ուղղենք արաբներուն և առաջին հերթին իրաւանցիներուն՝ մերժելու պաղեստինցիներուն դէմ աքսորի կամ արտաքսումի ամէն անհատական կամ հաւաքական միջոցառում և կառչած մնալու պաղեստինցի ժողովուրդի տունդարձի իրաւունքին», եզրափակեց Պըրրի:

Ծար.՝ էջ 9

ԸՆՏՐԱՔԱՐՏԸ ԱՆՀՐԱՄԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական քարտի: Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական քարտ չունեն, կրնան դիմել Հ. Յ. Դ. հետեւեալ ակումբները.

- ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ՍՊՈՐՏԻՆԵՐՍԻ ԵՐՁՅԱՆ Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924 Ռոստոմ ակումբ - Հայաշէն՝ 01/328471 Նշան Փալանճեան ճեմարան - Արեւմտեան Պէյրուս՝ 01/375412 Տիգրան Ծամհուր ակումբ - Մար Մխայէլ՝ 01/580141

- ՖԱՆԱՐԻ ԵՒ ՌԱՄԵՍՅԵՆՆԵՐՍԻ ԵՐՁՅԱՆ Է. Ակունցի ակումբ - Ֆանար՝ 01/891546 Ռաուտայի ակումբ՝ 01/683372

- ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՐՁՅԱՆ Աղբալեան ակումբ՝ 04/722902 Նաքքաշի կեդրոն՝ 04/410691 Ժունիի ակումբ՝ 09/933096

- ԶԱԼԲԱՅԻ ԵՐՁՅԱՆ Գարեգին Նճրեհ ակումբ՝ 01/877661 ԵՆԿՐ ՄՈՒԹԻ ԵՐՁՅԱՆ Անի ակումբ՝ 01/895481

- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԵՐՁՅԱՆ Մարգարապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949 Ռուբէն ակումբ - Նորաշէն՝ 01/254322 Դրո ակումբ - Արագած՝ 01/268647 Արիեան ակումբ - Սիւ՝ 01/261636 Զաղաքապետարանի շէնքեր - «Բաբգէն Սիւնի» կեդրոն՝ 01/489477

- ԹԵԼԻՐԵԱՆ ակումբ - Ամանոս՝ 03/587498 Մար Եուսէֆի ակումբ՝ 01/254709 Նիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912 Զաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

Հ. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՒՆԱԿԱՆ ՄԱՐՁԵՐ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՒ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ՝ Արարապ Ախարոնեանի, Կարօ Կապուրակեանի, Մանուկ Մինասեանի, Հրաչ Կայծակեանի, Միլէյ Հարպոյեանի, Գրիգոր Գրաճեանի, Լիզա Ժազարճեանի և Վիզէն Տիշէրճեանի

Ընկերակցութեամբ՝ Ծանր Տիշէրճեանի և իր նուագախումբին

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 17 Մայիս 2002, երեկոյան ժամը 8:30ին, Պուրճ Համուտի «Արին» կեդրոնին դիմաց:

ԱԿՆԱՐԿ

«ՄԵՆՔ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԻՆ ԵՆՔ»

Հինգշաբթի երեկոյ լիբանանցի ժողովուրդը պահանջուեալ «Էլ. Սի. Սի.» հեռատեսիլի կապին կողմէ պատկերասփռուած յայտագիրի մը, ուր հայ ծերունին, անդրադարձնալով հիւսիսային Մեթնի մասնակի ընտրութիւններու մասին, առանց տատանումի ու հարցապնդող խօսակցի պատասխանեց ըսելով՝ «Մենք Դաշնակցութեան կողքին ենք և անոր տրամադրութեան տակ: Դաշնակցութիւնը կ'ընէ՝ քուէարկեցէք, մենք կը քուէարկենք»:

Հայ ծերունին եկաւ դաս մը տալու այն բոլոր լիբանանցիներուն, որոնք նոյն հարցումին պատասխանեցին անտարբեր և անշահագրգիռ կերպով, տալով ոչ հիմնաւորեալ պատճառաբանութիւններ, որպէսզի արդարացնեն իրենց ընթացքը: Բայց հայ ծերունին քաղաքացիական պարտաւորութեան բարձր գիտակցութեամբ և իր կուսակցութեան՝ Հ. Դաշնակցութեան հանդէպ տածած ամենայն վստահութեամբ, յստակացուց իր կեցուածքը, ինքզինք իբրեւ անկեղծ փնտրութեան անհրաժեշտ զինակցութեան և անոր որդեգրելիք քաղաքական կեցուածքին:

Լիբանանցի ժողովուրդը առաջին անգամ չէ, որ պահանջուեալ կ'ըլլայ այսպիսի երեւոյթի մը: Առաջին անգամ չէ, որ լիբանանցի ժողովուրդը կը տեսնէ ժողովուրդ և Հ. Դաշնակցութիւն անքակտելի և անխորտակելի կապը: Առաջին անգամ չէ, որ խօսնակը կը ստանայ այսպիսի յստակ պատասխան: Այս երեւոյթներուն ակնատես կ'ըլլան բոլորը, երբ կայ կարելոյ կամ անկիւնադարձային հանգրուան՝ փորձաքարի պարունելու կամ քաղաքական անհրաժեշտ կեցուածք որդեգրելու:

Հայ երեց ազգայինին կուսակցութեան նկատմամբ ունեցած հաւատարմութեան այս ցուցանիշը, յանելեալ ծառայութեան ու անսակարկ նուիրումի պարտաւորութեան տակ կը դնէ Հ. Դաշնակցութիւնը, որ իր հիմնական ուժը գաղափարական իր ծառայութեան կողքին միշտ պատրաստ է իր ժողովուրդին՝ համակիր պահպանման մէջ և այդ մէկը տեսած է իբրեւ հիմնական յենարան իր բազմաբնույթ գործունէութեան ընթացքին:

Կը գտնուիք հիւսիսային Մեթնի մասնակի ընտրութիւններու սեմին և ընտրական տար մթնոլորտը վստահաբար մղէ շատ մը կողմեր այլատեսութեան կերպով ներկայացնելու հայ անհատին ցուցաբերած այս վստահութիւնը: Այս բոլորը նախատեսելի են, սակայն լիբանանահայութիւնը, այս մասնակի ընտրութիւններուն ևս իր հաստատու ամուր կեցուածքով, իր անբողջական մասնակցութեամբ և յանձնարմութեան բարձր գիտակցութեամբ պիտի ուղղուի դէպի քուէատուփ և կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը:

Երեց ազգայինին այս պարզ, սակայն հաստատակամ արտայայտութիւնը պարագայական և կազմական մթնոլորտի արդիւնք չէ, այլ՝ ամբողջական համոզում և արմատացած կեցածք: Ան ամբողջին հաւատացած է, որ այս վստահելիութեան շնորհիւ լիբանանահայութիւնը պիտի դառնայ աւելի ուժեղ և կենսունակ ու երաշխաւորուին անոր համայնքային բոլոր իրաւունքները և կատարուի սրբագրուելու պատահած բոլոր իրաւարկումներուն:

Մինչ այդ՝ այս վստահելիութեամբ և հաւատքով կը նայինք վաղուան ու այս համոզումով կը շարունակենք մեր երթը:

3. ՀԱՄԱԹԵԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՒ ՀՅ.Դ. ԼԵՄ.Ի Ե. ՄԻՍՏԵԱՆ՝ ՄԵՍՆԱՅԻՐԻ

ՇՈՒՇԻՐ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10 ԱՄԵԱԿ

ԿԸ ԲԱՆԱԾՕՒԷ ԸՆԿ. ՍԱՐԳՍԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Տեղի կ'ունենայ Եւրաթ 11 Մայիս 2002ի երեկոյան ժամը 8:00ին, Տիգրանեան արահին մէջ, Այնճար:

www.lemagan.com

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում ՀՀ դեսպանութիւնը յայտարարում է մրցոյթ քարտուղար - գործաւարի թափուր պաշտօնի համար:

Դիմողները պետք է լինեն 20էն 35 տարեկան, ունենան բարձրագոյն կրթութիւն կամ լինեն համալսարանական ուսանող, տիրապետեն հայերէն, արաբերէն, անգլերէն, ֆրանսերէն լեզուների, կարողանան օգտուել համակարգչից:

Ցանկացողները կարող են դիմել ՀՀ դեսպանութիւն հետեւեալ հասցեով. Մթայլեպ, Եսաիմ փողոց 28, հեռ. (04) 418860, (04) 402952, Երկուշաբթին Ուրբաթ օրերին, ժամը 10:00էն 14:00:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը Մայիսի 20ն է:

ԼԻԲԱՆԱՆՈՒՍ ՀՀ ԴԵՄՊԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱ ԶԱՆԴՈՒՐԺՈՂՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ Ե

Կ'ԸՆԵ Խ. ՍՈՒԱՆՍ

Եվրոպական Միության արտաքին քաղաքականության պետ Խալիկ Սոլանայի խոսքից, որ Եվրոպա տակալին կր մնայ հանրաժողովրդական օրինակ մը:

Սոլանայ նկատել տուաւ, որ վերադարձուած է, որովհետեւ Միացեալ Նահանգներ ստացած են այն տպավորութիւնը, թէ Եվրոպա քիչ թէ շատ վերածուած է հակասեմական երկիրներու խմբակի մը:

«Անհիշող է այն տեղեկութիւնը, որ երիտասարդ եւրոպացիներ չունին իրենց ծնողաց արժէքները: Անհիշող է այն տեղեկութիւնը եւ յստակօրէն կը հերքեմ վայն», ըսաւ Սոլանայ Ե. Միության հարցերուն յատկացուած խորհրդատու Վալտեր Բոնիպարտի:

«Եվրոպա պիտի շարունակէ ըլլալ վայր մը, ուր գրեթէ բոլոր քաղաքացիները կը շարունակեն համբերատարութեան եւ փոխ հասկացողութեան արժէքները պաշտպանել, ինչ որ բոլորովին տարբեր է հակասեմականութենէ», նշեց ան:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐՏԵՍ ԶԱՆՍԻՆ ՑԿԵԱՆՍ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱԻ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒԹՅԱՆ, 10 (ՌՈՅԹԸՐԸ)- Ամերիկեան ԷՖ. Պի. Այ. գաղտնի սպասարկութեան գործակալ Ռաբբի Վանսին ցմահ բանտարկութեան դատապարտուեցաւ Ուրբաթ օր, Մոսկուայի գաղտնիքներ ծախսած ըլլալու յանցանքով:

Վանսին, որ անցեալ տարի Միացեալ Նահանգներու համար վաճառու գաղտնիքներ ծախսած է 1,4 միլիոն տոլարի փոխարէն, ներողութիւն խնդրած է իր գործած արարքին համար եւ ըսած է. «Անօթաբար եմ»:

Վանսին յաջողած էր «խուսափել» մահուան դատապարտուելէն, որովհետեւ խոստացած էր պետական պաշտօնատարներու հետ գործակցիլ իր կատարած լրտեսութիւններուն մասին, որոնք երկարած են աւելի քան երկու տասնեակ տարիներ եւ պատճառած անտուայն երկու գործակալներու սպանութիւնը, Ռուսիոյ մէջ:

Դատաւարութեան ընթացքին Վանսին խոստովանած է, որ շահագործած է իրեն հանդէպ շատերուն ունեցած վստահութիւնը, «վիրաւորած» է ու

ՏԱՂՍԱՆԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ԶՈՒՆԵՐՈՒՆ ԹԻԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

ՄՈՍԿՈՒՍ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Տաղստանի մէջ Հինգշաբթի օր տեղի ունեցած ականի մը պայթումին պատճառով թիւր 41ի բարձրացած է Ուրբաթ օր, մինչ օտարներու ցաւակցութեան եւ կարեկցութեան արտայայտութիւնները հաւանական կը դարձնէին, որ Մոսկուա քաղաքներու հարաւային իր շրջանին մէջ աւելի խիստ քայլերու դիմելու՝ ճկմելու համար ընթացները:

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին եւ Մ. Նահանգներու նախագահ Ճորձ Գործողութեան ձեռնարկողները «սահաբեկիչներ» կոչած են:

Չոհերուն շարքին են 17 երեխաներ: Ըստ Տաղստանի առողջապահութեան փոխ նախարարին, տասնեակներով վիրաւորներու վիճակը շատ ծանր է եւ պոհեբուն թիւր կրնայ բարձրանալ:

Ո՛չ ոք ստանձնած է պայթումին

պատասխանատուութիւնը, սակայն Ռուսիոյ Յաղթանակի Օրը տեղի ունեցած գործողութիւնը կը թուէր Մոսկուայի պատգամ մը ըլլալ, թէ շրջանին մէջ անոր քաղաքականութիւնը որեւէ տեղ չ'ուղղուիր: Պաշտօնատարներ չ'ենք ըմբոստները հաւանական յանցարարներ նկատած են:

Բազմաթիւ երկիրներ, որոնց կարգին՝ Մ. Նահանգներ եւ Ֆրանսա, կարեկցութիւն արտայայտած են: Պուշ գործողութիւնը «սահաբեկչութեան չար արարք մը» որակած է եւ շեշտած, թէ Մոսկուա եւ Ուաշինթըն սահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ դաշնակիցներ են:

Նկատի ունենալով Փութինի եւ Պուշի միջեւ Մայիս 23էն 26 Մոսկուայի մէջ նախատեսուած վեհաժողովը, Տաղստանի մէջ պայթումը կը քաջալերէ Փութինը՝ Չենչինիոյ ըմբոստ շրջանին մէջ իր ճնշումի քաղաքականութիւնը շարունակելու:

ՀՈՒՆՏԱ

ԶԳԱՅԱԿԱՆ ՀՐԱԺԵՇՏ ՄԸ՝ ՓԻՄ ՖՈՐԹՈՒԻՆԻ

ՌՈՒԹԸՐՏԱՄ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Հոլանտայի մէջ հապարատր պատրուներ պատգաւան հրաժեշտ մը տուին Ուրբաթ օր սպանուած քաղաքական անձնաւորութիւն Փիմ Ֆորթուինի:

Ֆորթուին, որուն օտարներու նոր հաստատումներու դէմ քաղաքականութիւնը եւ իսլամութեան դէմ յօրակցութիւնը ցուցաբերելու համար Ֆորթուինի, որուն բացաւայտօրէն յարձակողական ոճը՝ քաղաքական «աւանդական» անձնաւորութիւններուն եւ օտարներու դէմ, պիտի հաւանաբար կատարութեան պիտի հասցնէր:

Ան Երկուշաբթի օր

մատուցողներ վայն ցեղապաշտ կ'անուանէին, բազմաթիւ քրեակրողներ՝ ներստեալ Հոլանտա հաստատուած օտարներ, կ'ըսեն, թէ անոր անունը «սեւցած է» քաղաքական մրցակիցներու եւ լրատուաբաններու կողմէ:

Անոր պօրապիկ կանգնողները անոր անկեղծութիւնը կը գովարանէին, ինչ կը վերաբերէր «թապու» հարցերու, որոնք կ'անտեսուէին քաղաքական ընտրանիին կողմէ:

Ֆորթուինի եղբայրը կոչ ուղղած է սպանուներուն, որ վայն սուրբի մը չվերածեն:

Քաղաքական մեկնաբաններ կ'ըսեն, թէ այս շաբաթ արտայայտուած վայրոյթն ու համակրանքը կրնան Ֆորթուինի կողմէ հիմնուած կուսակցութեան առիթ տալ, որ ընտրութիւններուն պարտութեան մատնէ աւանդական կուսակցութիւնները, հակառակ անոր, որ «Փիմ Ֆորթուինի Յանկ» կուսակցութեան թեկնածուներուն մեծամասնութիւնը քաղաքական կեանքի փորձառութիւն չունի:

«ՄԷՆ ԼԱԶԱՐ»Ի ԳԵՏԻՆԵՆ ՈՐՄԱԶԴԸ ՎԵՐՑՈՒԵՑԱԻ

Փարիզի երկաթուղիի կայանին գետինը պետեղուած հսկայ որմապղի մը դէմ թուրքերուն կողմէ բողոքի ցոյցերուն իբրեւ արդիւնք, որմապղի վերցուեցաւ: Որմապղի կը ներկայացնէր թրքական բանակին սպայակոյտի պետը՝ Հիւսէյն Քըվըրքոլուն իբրեւ մամլոյ պատուութեան թշնամի:

«Մէն Լապար»ի մէջ ոստիկաններ սկսած են որմապղիները վերցնելու աշխատանքին, յայտնեց «Առանց Սահմաններու Լրագրողներ» խմբակը, որ պետեղած էր որմապղի:

Բարկացած թուրքիս սպանաց Ֆրանսայի հետ պինդորական համաձայնագիրները վերատեսուութեան ենթարկել որմապղին դէմ իբրեւ բողոք:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը նկատել տուաւ, որ ֆրանսական իշխանութիւնները պետք է նաեւ ոչ պետական կազմակերպութիւն մը եղող «Առանց Սահմաններու Լրագրողներ» խմբակին դէմ քայլերու ձեռնարկեն, որովհետեւ անիկա նախաձեռնած է անարգանքի տգեղ այս ցուցադրութեան:

ՇՐԷՕՏԸՐ – ՔԱՐԻՄՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՇԷՆԹ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Գերմանիոյ վարչապետ Կերխարտ Շրէօտըր Ուրբաթ օր յայտնած է, թէ Ուկրաինայի մարդկային իրաւանց խոցելի մարդը արծարծած է անոր դեկաւարին՝ Իսլամ Քարիմովի հետ:

Աֆղանիստան Հինգշաբթի օր կարճատեւ այցելութեան մը ետք, Շրէօտըր Ուրբաթ օր Թաշքէնթի մէջ յայտնած է, որ առանց «Թերմէյ» օդակայանին՝ Ուկրաինայի ստան – Աֆղանիստան սահմանին վրայ, անկարելի պիտի ըլլար Աֆղանիստանի մէջ գործող 1163 գերմանացի պինտորներուն պարնաւորումը ապահովել:

Ան մամլոյ ասուլիսի մը ընթացքին սակայն նաեւ յայտնած է, թէ Քարիմովի հետ իր տեսակցութեան ընթացքին յայն տեղ գրաւած է Ուկրաինայի տանի մէջ քաղաքային ընկերութեան իրաւունքներու հարցը, որ մարդկային իրաւանց պաշտպաններու համար մտահոգութեանց առարկայ է:

Մեպտեմբեր 11ին Մ. Նահանգներու մէջ յարձակումներէն ետք, Քարիմով փութացած էր իր երկրին օդային տարածքը եւ կարգ մը կեդրոններ առա-

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղեքսանդրիոյ Ազգ. Պողոսեան վարժարանը 2002 - 2003 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցիչ - ուսուցչուհիներու:

Շեռաքրքրուողները կը խնդուի դիմումագիրները ներկայացնել, անոնց կցելով իրենց ուսումնական վկայագիրները եւ նշել փորձառութիւնը, գացնոք յղելով Աղեքսանդրիոյ Ազգային Իշխանութեան՝ ամենաուշը մինչեւ 31 Մայիս 2002, հետեւեալ հասցէին.

COMMUNAUTE ARMENIENNE
12 Rue Baidawi - EL-Labban
Alexandrie (21519)
B.P. 488
EGYPTE
Fax 00-20-3-3926321

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՆ
ԱԶԳ. ՍՈՒԱՆՈՂԱՐԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԿԱՆ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Յառաջիկայ Կիրակի, 12 Մայիս 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում:

Ձեռնադրութիւնն ու օծումը պիտի կատարէ եւ իր հայրապետական պատգամը պիտի տայ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում պիտի ստանայ Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միջեկեղեցական բաժանմունքի վարիչ՝

ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵՍԵՂԵԱՆ

Սուրբ պատարագ՝ Ժամը 10:00
Ձեռնադրութիւն եւ օծում՝ Ժամը 10:30
Հայրապետական պատգամ՝ Ժամը 11:00

Ձեռնադրութեան առաջին բաժինը տեղի պիտի ունենայ այսօր՝ Շաբաթ, 11 Մայիսի երեկոյեան Ժամը 5:00ին:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու Շաբաթ եւ Կիրակի օրերու հանդիսաւոր արարողութեանց:

ԴՐԻՆ ԱՂԵՔՍԱՆՈՂԱՐԱՆ

ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկրին տնտեսական տագնապալի կացութեան առջեւ եւ լիբանանահայութեան կենսամակարդակը բարելաւելու, այլեւ անոր առօրեայ կարիքներուն ըստ կարելոյն հասնելու միտումով, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը ծրագրած է վերամշակման ենթարկել իր սպասարկութիւնները եւ ձեռնարկել համայնքային վարգացման ծրագիրներու իրագործումին՝ community development project:

Այս աշխատանքը յաջողութեամբ պատկերու համար, անհրաժեշտ կը դառնայ գիտական հիմունքներով ուսումնասիրել ընտանիքներու ընկերային իրավիճակն ու կարիքները: Ուսումնասիրութիւնը պիտի կատարուի հարցախոյզի մը միջոցով: Այս նպատակով հայ ուսանողներ պիտի այցելեն տարբեր իւսի պատկանող մեծ թիւով ընտանիքներու եւ պատրաստուած հարցարանները լեցնել տալով պիտի ծանօթանան անոնց կարիքներուն: Սոյն հարցախոյզի արդիւնքներէն բխող եզրակացութիւնները որոշիչ դեր պիտի խաղան հիմնարկիս իրագործելիք յառաջիկայ ծրագիրներու կողմնորոշման մէջ:

Շեռեւաբար, կը խնդրենք հայ ընտանիքներէն, որ դրական մօտեցում ունենան իրենց դիմող ուսանողներուն եւ գործակցութեան ոգիով պատասխանեն իրենց ներկայացուած հարցարաններուն՝ վստահ ըլլալով, որ հարցախոյզներով քաղուած բոլոր տեղեկութիւնները պիտի արձանագրուին բժախնդիր խորհրդապահութեամբ:

Վստահելով ձեր գիտակցի վերաբերումին, կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

ՃԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԶԵՆՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԴՈՐ

45ԱՄԵԱԿ

«ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻՄՆԷ» ՊԱՐԱՐՈՒՄԵՐՈՒ ԵԼՈՅԹ

Պարուոյց՝ **ՅԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

Տեղի կ'ունենայ 16, 17, 18, 19, 24, 25, 26 Մայիս 2002, երեկոյեան Ժամը 8:30ին, ցերեկոյց՝ Կիրակի 19 եւ 26 Մայիս 2002, կեսօրէ ետք Ժամը 4:00ին «MONNOT» բառերասարհին մէջ, Թապարիս:

Sponsored by **BYBLOS BANK SAL**

Vahan yev Marina

Գահան Արծրունի
Քեղերակցիկ տիգերու Տեղեւաբար
Մարինա Յովհաննէսեան
Պարուոյց՝ Անտակի աստնակներ

Կիրակի **19 Մայիս**

ՅԱԿՈՒ ՏԵՐ ՄԵԼՈՆԵԱՆ ՄՐԱԳ, ԺԱՄԸ 20ԻՆ

IGOL MOTOR OIL

FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Գրական Էջ

ԽՕՍՔ ԱՆԿԱՏԱՐ

«Մայրերու կեանք: Ո՞րն է վեպը, որ կարենար հաւասարիլ քեզի»:

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

Մայրս է դարձեալ: Ամիսը բնութեան երկնքնազգ վերաբարձողքից եւ օրհնեալ պտղաբերման, ամիսը կենսունակութեան եւ հրեւանքի, սիրոյ եւ ծաղկունքի: Եւ լեռներն ի վար կարկաչող աղբիւրներուն, դաշտ ու ձոր երկնազարած ծաղիկներուն եւ պայծառ երկինքներու անհուն ի վեր բարձրացող սոխակներու սաղմոսներուն հետ, առաջին հերթին, հայ մարդուն հոգին կը լեցուի հայ մօր սրտէն անհունացող սիրոյ ու գոհաբերութեան գարնանացեալ շարակներով:

հրդեհեց՝ կարկառելով ամբողջական կերպարը մեր մայրերուն: Հայ մայրերուն, որոնց վարակիչ շունչին, պողպատ կամքին, ընծայաբերող ոգիին եւ գերագոյն գոհաբերութեան անկրկնելի դասերուն դրոշմներէն ու խորհուրդներէն ոչ մէկը կրնանք հեռու պահել հայ ժողովուրդի սխրագործութիւններէն: Կեանքէն:

Յեղին յաւերժութենէն: Այդ իսկ պատճառով, մայրերու մայր Աստուածամօր արձանին ընդառաջ ծնրադրելէ, շուշան ու խունկ ծխելէ ետք, հայ մարդը անմիջապէս կը յիշէ մեր մայրերը, որոնք կիսաստուածներ ծնան բոլոր ժամանակներուն, բոլոր մարդերուն մէջ, եւ իրենց մայրերուն չափ հեզահամբոյր ու արի կիսաստուածները ամբողջացման փառքն ու պատիւը նուանեցին՝ գեցի, գիրի, գոյնի, մեղեդիի, կառոյցի, կարն խօսքով՝ գիւտի եւ յաղթանակի բոլոր բնագաւառներուն մէջ:

Ահա թէ ինչու, մայրերու օրուան առիթով, հայ բերրոգութեան անըստ ծաղկանոցէն քաղուած քովի անկատար ու թերի փունջով, մենք ուզեցինք մեծարել հայ գրականութեան գեթ քանի մը մեծանուն դեմքերուն մէջ մայրերը՝ պատկերով ու գիրով, որպէսզի յստակօրէն անձնաւորուի պատկերը հայ մօր ամբողջական դիմագիծին: Ամբողջացում ու պայծառացում անհրաժեշտութիւնը Մեծարեցի մօր, կարօտի թախիծը՝ Դ. Վարուժանի ծնունդ տուած ազնուազնի հաւատարմին, գերագոյն գոհաբերութեան ոգին՝ Պ. Սեւակի «Խաւս» մամիկին, հոգեղէն գեղեցկութիւնը՝ Համաստեղի սիրտը հայրենի եգերթին կարօտին շղթայած միւս գեղուհիին, իրաւութիւնը՝ Թ. Կլասիցիի եւ Յ. Շիրազի սրտերուն անմեռ իրաւութիւններ սերմանած համբոյրելի լուս իրաւներուն եւ այն բոլոր անկրկնելիներուն, որոնք հայ մշակոյթի գանձարանին պարզեցին վերանորոգ գանձեր, դարձուր աւանդներ եւ գաղտնիքները գեղին յաւերժութեան...

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՀԱՅ ՄԱՅՐԵՐԸ



Ս. Մեծարեցի մայրը, Շամադոյի մայրը, Պ. Սեւակի մայրը, Յ. Շիրազ եւ մայրը

ՄԱՅՐ ԻՄ ԱՆՈՒՇ

Ես կը սիրեմ քու դէմքը, քու դէմքը, մայր իմ անուշ, խաղաղութիւնն աչքերուդ, նոյնքան բարի ու անուշ, Ես կը սիրեմ ձակատդ, ձակատդ վաղուց խորշումած, Եւ քու վարսերդ արծաթե, վարսերդ, մայր իմ անուշ:

Ես կը սիրեմ ձեռքերդ կապոյտ երակ գծերով, խորշումներ քու դէմքիդ, քու դէմքիդ, մայր իմ անուշ: Թէ՛ն արդէն ծերացած, ուսերդ մաշած են էնքան, Սակայն, զիտի մէջ արդէն վաղուան հապար հոգեր կան:

Ինչպէ՞ս կրնաս սրտիդ մէջ ամբողջ երկինք մը բռնել, Ինչպէ՞ս կրնաս ծպտիդ մէջ ամբողջ արեւը բռնել, Ինչպէ՞ս, ինչպէ՞ս դուն կրնաս, ինչպէ՞ս, մայր իմ անուշիկ: Արցունքիդ մէջ մէկ կաթիլ, քու ամբողջ սիրտդ բռնել:

Չաւակներդ դեռ երէկ կը վաչկէին քու գրկիդ, Յետոյ նորէն աղմուկով կը փախչէին քու գրկէդ: Այսօր թոռներդ են կու գան, հին օրերու խաղիկ պէս, Եպէք վաղոց կապուտակ ախիբներու խաղիկ պէս:

Երբոր լուռ են ու նստած, շալ մը ձգած ուսերուդ, Իրիկն է, որ կը մանեւ հին օրերու յուշերուդ, Կը յիշես տունն հայրենի, ճամբաներդ արեւվառ, Ուրկէ անցած են թեթե՛ւ հովերուն հետ բռնած պար:

Ու կը տեսնես ոսկեգոյն ցորեաններդ դաշտերուն, Չանգակատունը վանքին, կարծես դրուած միշտ հեռուն: Ու կը յիշես, թէ ինչպէ՞ս հայրս, քեզ մով սիրահար, Այգիներու ճամբային քու ետեւէդ միշտ կու գար:

Ու կը պատմես, թէ ինչպէ՞ս արեւն այնտեղ ուրիշ էր, Ծաղիկներուն, խոտերուն համն ու հոտը ուրիշ էր: Էն մեր վանքին, լեռան տակ, պանգին ձէնը ուրիշ էր, Ա՛խ, ուրիշ էր, ուրիշ էր, հացին համն իսկ ուրիշ էր:

Հիմա վաղուց ծերացած, ձգած շալ մը ուսերուդ, Քու թոռներուդ կը պատմես հեքիաթք քու յուշերուդ, Ու միտք կ'ընես, միտք կ'ընես, թէ ինչքա՞ն էր իրական Քու հեքիաթք արեւոտ, ուրտեղ հապար գոյներ կան:

Թափառեցայ երկիրներ, ճամբաներով շատ անցայ, Տեսայ զրկանք, տեսայ ցաւ, սէր ու խնդում են տեսայ, Բայց չտեսայ, չգտայ ոչ մէկ սիրտ այնքա՛ն արի, Քու հոգիիդ չափ արի, մայր իմ անուշ ու բարի:

ՀԱՍՏԱՏԵՂ

Պ. ՍԵՒԱԿ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Թ Ի Ն Ե Ր

ԽՈՒՆԿ ԵՒ ԱՐՅՈՒՆՔ

Շիրք մ'արցունքով՝ կաթիլ մը խունկ արքանօթին մէջ կը ցանէ մայրս՝ որ կ'անցնի անտես գոնէ, Եւ երջանիկ կը դնէ ունկ

Անդրաշխարհէն եկող ճայնին: Աչքերուն՝ որ պինք կը դիտեն կիրակնուտքի խունկին ատեն՝ ձեռքն անընդհատ կու տայ խա՛չն հին:

Եւ ամէնուն կու տայ բաժին՝ ծուխէն ծաղիկ մը ծափելի: Ու ցայգանուտն է հայելի՝ ուր կը ցոլայ բոցն աշխուժին՝

Լուսահոգի վուարթուններուն՝ զորս արբեցուց այս իրիկուն շարաթօրեայ խունկն ու արցունք: Մայրս այլեւոր չոքեր է ծո՛ւնկ...:

ՄԻՍԱԲ ՄԵՃԱՐԵՆՅ

ՄԱՅՐՍ

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ, Մայրս մի մայր հասարակ, Մայրս այս մայր երկրի մէջ՝ Արեւի դէմ մի ճրագ:

Բայց արեւի լոյսի տակ, Երբ բախտն ինձ վիշտ է բերում, Մրտիս մտայն այնպատակ Այն խեղճ ճրագն է ցրում:

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ, Մայրս մի մայր հասարակ, Մայրս մի բուռ սրտիս մէջ՝ Գիշեր ու զօր արեգակ:

ԱԲ. ԻՍԱԿԱԿԵԱՆ

ԸՍԷ ԻՆՏԻ, ԻՆՉ ԿԱՅ

(ՄՕՐՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ)



Մայր, բոլոր ասոնք ու աս պատմածներուդ ամենայնեան մանրամասնութիւններն ալ միտքս են տակալին, որոնք տունին պատկերներն ալ չեն մոռցեր ու անոնք մէկ-մէկ սորվեցուցած աղօթքիդ պէս կը յիշեն, բայց՝ քանի որ կ'ըսեմ, միայն գիշեր մը ճամբորդելով, այնքան մը տեղեկութիւններ կը բերէիր գեղէն, որ այնքան հեռու կը մնար մեզմէ, հիմա ալ պահ մը վեր ա՛ռ գլուխդ ու ըս՛՛ ինձի, ի՛նչ կայ անունս այնքան ալ մեր մօտը, որ հոն գտնուի: Ըս՛՛ Մայր, վստահ եղիր, որ չպիտի մերժեմ լսել, երբեք չպիտի ձանձրանամ ըսելիքներէդ: Երազներուդ պէս արդեօք գերեզմանէն անդիններն ալ նորէն ճշմարիտ իրականութիւններ պիտի հռչակես, թէ բացարձակ ոչընչութիւն պիտի ըսես պարզամտ: Հարցուկի մը պատկառոտ սարսուռանքներուն մէջ ու միշտ անանուն կարեւորութիւնով մը պիտի լսէի քեզ, Մայր, որն է երազը, սա արեւի՛նը, թէ վաղուան ստուերներուն կեանքը, որուն դուն ամիսներէ ի վեր սկսուածքն ըրիր՝ դեռ մեզի բան չես ապստարած, մեզ յուսահատ սպասանքի մը մէջ սգաւորներ կը պահես, բայց դուն այսչափ երկար չէիր քնանար, Մայր, դուն աքաղաղին ճիշտը ընդոտ արթնցող մը, հիմա ամպեր կը պոռան ականջիդ ու բնաւ չես շարժիր, վեր չես առներ գլուխդ,

աղօթքի չես վագեր, երազներդ իրականութիւն, թէ ինչ, չես յայտնեք մեզի... ու կը զարմանամ թէ՛ ի՛նչպէս կրնաս համբերել:

Այսչափ երկար ու խորունկ քուն քնանալով, մինչեւ հիմա աշխարհ մը ըսելիք կը կախելիք շրթունքէդ. թղթակ գիշերի մը կեանքէն ամէնքն ալ, հիմա ի՛նչ պիտի կրնայիր խօսիլ ան մեծ գիշերին կողքէն, անոր սոսկալի ու խաւարակուլ ալքերէն, ուր մտար ու մարեցիր ճրագը ետեւէդ:

Առաջին օրը ի՛նչպէս ճամբորդեցիր, որո՞ւ հանդիպեցար, ո՞ւր ըրիր հանգիստի վայրկեանային դադարդ, դուն որ արդէն շունչէդ կը կանչէիր:

Այն պահուն, ուր հողն ու քարը բուռ-բուռ քու մարմինդ խփող ստուերներն վրայ թափելով՝ գոռ թնդիւն մը կը լեցնէր գերեզմանդ, ի՛նչ խորհեցար պրոքեք, հէզ Մայր, մեղաւոր հնդկուհի մը կը թաղեն ըսիր, թէ՛ մարդիկ մահուան վրէժը կ'առնեն այնպէս հողին տակ քեզ՝ քու մարմինն ծծելով:

Դուն սակայն զգացի՛ր անոնք, անդրադարձա՛ր այն եղածներուն, երդում քեզի, որ ես աւագահատ մըն ալ չնետեցի վրայ, այդպէս թող ձեռքս փրթէր, Մայր, թող այդ տեսակ յիմար սովորութեան մը համակերպութիւնով աջ ձեռքս, աջ աչքս զրկուէի: Քարերը, հողերը քու կուրծքիդ նետուած, իմ գլխուս կ'իյնային արդէն, գերեզմանիդ քովէն դէպի

տուն ես արդէն ճշմարիտ մեռել մը դարձայ: Առաջին մուտքը դժուար քայլափոխ մըն է եղել կ'ըսես, հողիս աս կողմէն այն կողմը սաւառնող հրեշտակներն ալ անխուսափելի այդ դժուարութիւններէն պիտի անցնին եղեր անպատճառ, հոգ մի՛րնեք: Դուն միայն հիմա ըսելու եղիր թէ՛ ի՛նչ տեսար այն քուկիւններդ, որոնք կը փափաքէիր հէնց թերաստուերը տեսնել:

Հայրս ո՞ւր կը մնար արդեօք, չտեսա՞ր, չի բարեկեցի՞ր, չըսի՞ր, թէ՛ երեսիս վրայ իր գարկած ապտակներուն տեղը հիմա աղբեկ մօրուք մը կը շփէ տղար, ան ատեն, որ անել ու թնճկոտ խորհուրդ մը կը ճմուժկէ իր միտքին մէջ:

Ես ալ ո՛ր ճամբով գայի, որ շիտակ քեզի հասնէի, հոն ալ մէկտեղ ապրէիք: առանց քու ներկայութեանդ, ինձի համար այդ լոյսերու աշխարհն ալ տրտուած դատարկութիւն մըն է յայտնապէս, ինչպէս հոս քեզ կորսնցնելէս ի վեր դժոխքի մը ցաւերն ունիմ հոգիս մէջ: Միայն քեզի կը հաւատամ Մայր, պահ մը վեր ա՛ռ գլուխդ ու ըս՛՛, հէնց ակնարկով մը հասկցուր, թէ ի՛նչ կայ անդին: Միայն քու ըսածներուդ անմատուր պիտի մնամ, Մայր:

ԹԼԿԱՏԻՆՅԻ

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ



ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ «ԱՐԵՒԱՀԱՄ ԲԱՌ»Ը ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Արեւելահայ գրականութեան մեծանուն դէմքերէն Եղիշէ Չարենցի գրական վաստակին կարեւոր մէկ բաժինը տեղադրուած է համացանցի www.acc.am/ կր/charents հասցէով կայքին մէջ:

Արդիական ձեւաւորուածով այս կայքը կը բացուի երաժշտութեամբ, որուն ռիթմով կայքին զանազան բաժինները կու գան եւ կը տեղաւորուին գլխաւոր էջին ձախ կողմը, Չարենցի գիտական գործերը: Լատենտիկական այս «ցուցադրութեան» ետք, ընթերցողին կը մնայ ըմբռնելու Չարենցի հարեւաւոր բանաստեղծութիւնները: Կայքը կ'ընդգրկէ Չարենցի ստեղծագործութիւններուն յատկացուած 12 ենթաբաժին, ինչպէս նաեւ «կեանքի եւ ստեղծագործութեան հիմնական տարեթիւեր» ժամանակագրական-կենսագրական շահեկան բաժինը, որ կը ներկայացնէ «էպիքական» Չարենցի փոթորկալոյց կեանքը:

«Բանաստեղծութիւններ» բաժինը կ'ընդգրկէ 39 թերթուած, որոնց կարգին՝ «Ես իմ անուշ Հայաստանի», «Լուսամփոփի պէս աղիկ», «Մահուան տեսիլ», «Մօրս համար գաղտնի»:


«Պոէմներ» բաժինը ընթերցողին դիմաց կը բանայ Չարենցի երկարաշունչ 9 բանաստեղծութիւնները, որոնցմէ նշենք՝ «Տանթէական առասպել», «Ամբոխները խելագարուած», «Չարենց նամէ»:

«Էպիքական լուսարաց»էն 26 բանաստեղծութիւններ, «Էպիգրամներ եւ սատիրական»էն՝ 40 բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ «Գիրք ճանապարհի», «Գիրք իմացութեան», «Արուեստ քերթութեան», «Տաղեր եւ խորհուրդներ» բաժիններուն մէջ ներկայացուած գործերը, «Վերջերգ 1935-1937» եւ «Արձակ» («Երկիր Նայիրի») բաժինները ընթերցողին դիմաց կը բանան Չարենցի ստեղծագործական անդամաստանին համայնապատկերը:

Չարենցի գրական վաստակին նման գոհարներու տեղ տուող համացանցը անգամ մը եւս մեզի կը յիշեցնէ, թէ ան մեզի կու տայ այն, ինչ որ մենք տուած ենք իրեն, եւ թէ՛ համացանցին օգուտն ու վնասը ի վերջոյ պայմանաւորուած է մեր յանձնառութենէն:


ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՀՈՂՈՎՈՅԹԸ՝ ՀԱՏՈՐՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

Համայնագիտարան, անգլերէնով Encyclopaedia բառը եկած է յունական «encyklios paidia» արտայայտութենէն, որ կը նշանակէ «ընդհանուր դաստիարակութիւն - զարգացում»: Ընդհանուր զարգացումի տիրանալու հասկացողութիւնը կու գայ յոյն փիլիսոփայ Պլատոնէն, ըստ որուն՝ աւելի լաւ մտածելու համար հարկ է համապարփակ գիտութիւն ունենալ: Հետեւողաբար, միջնադարեան մտածողներ կը շեշտէին, թէ համայնագիտարանները յատկանշական յառաջդասարկ կ'առաջնորդեն մարդկութիւնը: Այդ ժամանակաշրջանին զանազան փիլիսոփաներու կողմէ համայնագիտարանները նկատուած են «ճշմարտութեան ձգտումի միջոց», որ Ֆրէնսիս Պէյքըրի կարծիքով՝ «մարդկային միտքը կը բերեղացնէ զայն իտէլական մարդու մտքի պաշարին հետ չփոխանակելով: Այս բոլորէն անդին անցելով՝ Ալեքսանտր Ալիթ-չինսըն իր «Encyclopaedia



մէջ աշխարհագրութիւնը եւ աստղագիտութիւնը մտածանին առաջին գիտելիքները կը կազմէին, մինչ արուեստները վերջին: Արդի համայնագիտարաններու նախահայրը կը նկատուի Էնցարթի «Cyclopaedia» Չեմպլըրի «Cyclopaedia» Չեմպլըրի (1728): Այս առաջին համայնագիտարանն է, ուր որդեգրուած են նիւթերու զատարման մինչեւ օրս օգտագործուող շարք մը մեթոտներ, ինչպէս նաեւ ան առաջինն է, որ հետազոյն ունեցած է յաւելուածներ: Առաջին արդի համայնագիտարանը «Encyclopaedia» (1751 - 1765), հսկայական ներդրում ունեցած է եւ կը նկատուի իր ժամանակաշրջանի կարեւորագոյն համայնագիտարանը: Համայնագիտարանի առաջին տպագրութիւնը կատարուած է 1768ին, Սկոտլանդի մէջ:

«Ամերիքանա», ամերիկեան մեծագոյն համայնագիտարանը առաջին անգամ հրատարակուած է 1829 - 1833: Անոր 1911ի վերահրատարակութիւնը բաղկացած է 20 հատորէ, 1918 - 1920ը՝ 30 հատորէ: Համակարգիչներու օգտագործման ժողովրդականացումով՝ ընկերութիւններ եւ հրատարակչատուներ սկսան համայնագիտարանները սկսուողներու վրայ ամփոփելու ծրագրերը մշակել: «Մաքրոսֆօթ» ընկերութեան PC-ին հրատարակուածն է «Սի-




«Encyclopaedia» (1751 - 1765), հսկայական ներդրում ունեցած է եւ կը նկատուի իր ժամանակաշրջանի կարեւորագոյն համայնագիտարանը: Համայնագիտարանի առաջին տպագրութիւնը կատարուած է 1768ին, Սկոտլանդի մէջ: «Ամերիքանա», ամերիկեան մեծագոյն համայնագիտարանը առաջին անգամ հրատարակուած է 1829 - 1833: Անոր 1911ի վերահրատարակութիւնը բաղկացած է 20 հատորէ, 1918 - 1920ը՝ 30 հատորէ: Համակարգիչներու օգտագործման ժողովրդականացումով՝ ընկերութիւններ եւ հրատարակչատուներ սկսան համայնագիտարանները սկսուողներու վրայ ամփոփելու ծրագրերը մշակել: «Մաքրոսֆօթ» ընկերութեան PC-ին հրատարակուածն է «Սի-

«Պրիթանիքա» համայնագիտարանի առաջին հրատարակութեան առաջին էջը: perthensis»ը (1796 - 1806) կը նկատէ գերակայ անգլերէնով գրուած բոլոր ժամանակներու որեւէ տեղեկութիւններ փոխանցող գիրքէ: Համայնագիտարաններ գոյութիւն ունեցած են Հռոմէական կայսրութեան օրերէն: Արաբական խալիֆայութիւններու օրով գրուած են համապարփակ ծանօթութիւններ փոխանցող շարք մը մատենաներ: Սկզբնական շրջանի այս համայնագիտարաններուն մէջ նիւթերու դասակարգումը յաճախ կ'ըլլար ըստ «կարեւորութեան»: Այսպէս, օրինակ, հռոմէական համայնագիտարաններու

«Պրիթանիքա» համայնագիտարանը կը հանդիսանայ անգլերէն լեզուով գրուած հնագոյն եւ ամենէն ընդարձակ համայնագիտարանը: Համայնագիտարանը նորանոր յօդուածներ արձանագրել համացանցէն բան մը, որ «Encarta» հեռու կը պահէ ժամանակավրէպ պատկերներ: Այժմ հրատարակի վրայ է «Encarta Encyclopaedia, 2002»ը, որուն մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու, ինչպէս նաեւ համացանցի վրայ տեղադրուած «Encarta» համայնագիտարանին մանրապատկեր օգտագործելու համար կարելի է այցելել www.encyclopedia.com հասցէով կայքը: «Պրիթանիքա» համայնագիտարանը նոյնպէս հրատարակած է իր ելկտրոնային տարբերակը, որ բերեք չի կրնար փոխարինել «Պրիթանիքա»ի հատորները, որովհետեւ շատ համառօտ տեղեկութիւններ կը փոխանցէ: Համացանցի վրայ տեղադրուած են նաեւ շարք մը այլ համայնագիտարաններ, որոնցմէ նշենք հետեւեալները: - www.encyclopedia.com www.britannica.com www.encyclopedia.com

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻԹԵՐ ՔՈՆԿՐԵՍԻ ԳՐԱԴԱՐԱՆԵՆ (Բ.)



Միացեալ Նահանգներու Քոնկրէսի գրադարանին պաշտօնական կայքը (www.loc.gov) յատուկ բաժին մը տրամադրած է տարբեր երկիրներու օրէնսդրութիւններուն եւ սահմանադրութիւններուն, ինչպէս նաեւ իշխանութիւններու իրաւասութիւններուն եւ գործելաձեւին: Այս բաժինին մէջ յատուկ ենթաբաժին մը տրամադրուած է Հայաստանի Հանրապետութեան:

www.loc.gov/law/guide/armenia.html հասցէով այս ենթաբաժինին մէջ ներկայացուած են հետեւեալ նիւթերը եւ կայքերը:

Հայաստանի Հանրապետութեան 1995ի սահմանադրութեան անգլերէն թարգմանութիւնը, Սահմանադրական դատարանի 1997ի օրէնքը, ինչպէս նաեւ՝ սահմանադրութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ:

Հայաստանի օրէնսդիր, դատական եւ գործադիր իշխանութիւններուն մասին տեղեկութիւններ եւ «կապ»եր:

Օրէնքի անչուղղ նիւթեր՝ դատական եւ օրինական հարցերու մասին ուսումնասիրութիւնները՝ ներկայացնող կայքերէն: Այս բաժինը կ'ընդգրկէ համացանցի մէջ օրինական հարցերու ուսումնասիրութեան կայքեր, ինչպէս նաեւ՝ Ուոշինգթոնի համալսարանի գրադարանին, գերմանական, աստրալիական, ասիական եւ ամերիկեան պետական կայքերէն ընդարձակ եւ շահեկան տեղեկութիւններ եւ ուսումնասիրութիւններ: Այս ենթաբաժինին մէջ ներկայացուած են նաեւ շարք մը «կապ»եր, ուր տեղեկութիւններ կը փոխանցուին Հայաստանի աշխարհագրութեան, պատմութեան, քաղաքականութեան եւ մշակութիւնի մասին:

ՍՐՐՈՑ ՀՈՒՓՈՒՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Տնօրէնութիւն կը յայտարարէ, թէ սկսած են 2002-2003 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 6 Մայիս 2002էն սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն: Դիւրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան:

Հայ վաւերի տունն է հայ դպրոցը, ուր մօրը կարին նման, ան կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւելի իր հայեցի պատկանելիութեան եւ կը դառնայ չորս լեզուներով պարզացած, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնէայ, տիպար քաղաքացի:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուրթի լուսապատճէն կամ *իւրաժ քայտ*, մկրտութեան վաւերագիր, պատուաստներու եւ առողջ վիճակի վկայագիր եւ 4 լուսանկար:

2002-2003 տարեշրջանին եւս մանկապարտէսի փոքրիկներուն կը մատակարարուի նախաճաշ եւ ճաշ, վարժարանին կողմէ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՉԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԲԸ

VIDEOԻ ՎԱՍ ԸՈՒ ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՉԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱՎԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԶԷԷԹԵԱՆ ՀԱՍՏ.
Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՉԷՅԹՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ

ԿՈՉ

Պէրոլեի Չէյթունի Հայրենակցական Միութեան վարչութիւնը կը խնդրէ 70ը կմ անց տարիք բոլորած իր հայրենակիցներուն (կամ անոնց հարազատներն) անյապաղ կապ հաստատել վարչութեան հետ, հեռաձայնելով հետեւեալ քիւրդն մեկուն՝ 03-810463, 03-453752 եւ 01-267926:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԺՊԻՏ

Կը ներս... երթամ ստուգմ թէ քանի այցելու ունիմ համացանցի կայքիս վրայ:

Պատրաստե՛ք իՎ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Լ. Օ. ԽԱՉԻ
«Ա. ՊՈՒԼԴՈՒՐԴԵԱՆ»
ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Լ. Օ. Խաչի «Ա. Պուլղուրդեան» ընկերաբժշկական կեդրոնը կարիքը ունի վկայեալ հիւանդապահուիկի մը եւ ընկերային ծառայողի մը: Ետաքըրուողները կը խնդրուի անձամբ ներկայանալ տնօրէնութեան գրասենեակ, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ կեսօրը ետք ժամը 4:00: Առաւելագոյնը մինչեւ Երեքշաբթի, 14 Մայիս 2002:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Մանկապատանեկան

2002Ի ՄՐՑԱՆԻՇՆԵՐԷՆ

Զանգական տեսակի այս «ախոյեանները» փորձած են որեւէ ձեռնով իրենց անունը արձանագրել «Մրցանիշներու գիրքին» մէջ:

ՄՐՈՒՔԱՌՈՐ



Ո՛չ, այս մարդը հրէշ մը չէ, որ կը պատրաստուի վախցնելու այդ պատիկ տղան: Ան պարզապէս աշխարհի ամէնէն երկար մորուքը ունեցող անձն է: Մօտաւորապէս քսան տարի է ի վեր ան անելի չէ գործածած:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՈՒԺ



Ամէն մարդ գայն կը փոշն «Պարոն մագնիս»-ի: Ինչպէս թուի մորթին պատճառով ան իրեն կը քաշէ երկաթէ տեսակաւոր առարկաներ:

ԵՐԿԱՐ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Այս համբերատար




Երիտասարդը արդէն 16 անգամ յիշուած է «Մրցանիշներու գիրքին» մէջ: Ան 17րդ մրցանիշը կտրեց աւելի քան 130 քմ. քալելով, գլխուն վրայ դրած կաթի շիշ մը, առանց զայն ձգելու:

ԹԱՆԿԱՐԺԷՔ



Այս «գոհարը» եկած է Հոնկ Բոնկէն: Ան շինուած է ոսկիով եւ թանկարկին քարերով: Իբրեւ նուէր՝ մատանիէ մը աւելի յարգի կրնայ ըլլալ...

ՄԱՆՐԱԳԻՏԱԿՈՎ ՆԱՅԻԼ



Այս «պատիկ» առար-

կան կը ներկայացնէ կոփամարտի աշխարհի ամէնէն փոքր ունկը, ուր ի վանտրը Հոլիֆիլտ եւ Լէնոքս Լուիս կը ներկայացնեն դարուն ամէնէն հուշակաւոր բանջարմարներէն մէկը:

ԵՐԿԱՐ ՄԱՋ ԿԸ ՍԻՐԵՍ

Վհուկի կերպարան-



քով այս կինը բնաւ մագերէ չէ կտրած ծնելէն ի վեր, աւելի քան քսան եօթը տարի է ի վեր:

ԱՌԱՒԵԼ

- Ծամոնի քիթով ունեցուած աշխարհի ամէնէն մեծ փուչիկին մեծութիւնը հասած է 28 սանթիմետրի:

- Մարդ մը մէկ ոտքին վրայ կանգնած է 3 օր, առանց հաւասարակշռութիւնը կորսնցընելու:

- Մարդ մը կրցած է 48 քիլօ ծանրութիւն շալկել իր ականջներով, 10 վայրկեանի ընթացքին:

ԱՅԼԱԶԱՆ

ԹՈՂՈՒՆՆԵՐԸ ԱՎԱՆՁ ՈՒՆԻ՞Ն

Անշուշտ՝ Սակայն անոնք պահուած են:

Թռչունները կ'երգեն, որպէսզի իրենց ընտանիքին պատկանող միւս թռչունները գիրենք լսեն: Եզրակացուցին. անոնք ականջներ ունին, նոյնիսկ եթէ մենք այդ ականջները չենք տեսներ:

Թռչուններուն ականջները երկու պզտիկ ծակեր են, որոնք կը գտնուին անոնց գլուխներուն երկու կողմերը, փետուրներուն տակ լաւապէս պահուած:



ՉԻՐԸ ԼՈՂԱԼ ԳԻՏԵ՞Ն

Այո. անոնք մեզի նման կը լողան:

Անոնք նոյնիսկ շատ լաւ գիտեն լողալ, հակառակ որ ջուրէն շատ չեն ախորժիր: Այս պատճառով է, որ անոնք յաճախ «ծով չեն երթար», եթէ ստիպուած չըլլան:



ԿԻՆԵՐԸ Ե՞ՐՔ ՍԿՍԱԾ ԵՆ ՏԱԲԱՏ ՀԱԳՆԻԼ

1920ական թուականներուն սկիզբն է, որ սկսած է տարատր մուտք գործել կիններու պահարաններուն մէջ: Հին ժամանակներուն անոնք իրաւունք չունէին տարատ հագնելու: 1909 թուականին է միայն, որ նոր օրէնք մը անոնց արտօնած է տարատ հագնելի՝ հեծիկ քշելու կամ ձի նստելու համար:




Ո՞Վ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՄԿԱՆՈՏ ՄԱՐԴԸ

Անոնք շատ են:

Գունդ նետող մարզիկներ, ծանրաբարձութեան ախոյեաններ կրնան ունենալ այդ տիտղոսը:

Օրինակի համար, Հիւսէյն Թեգազատէ կը վերցընէ 260 քիլօ կշռող ձողեր, Թենտի Պարնզ իր գունդերը կը նետէ 23,13 մեթր հեռու, մինչ Եուրի Սետիքի մուրճը կը կտրէ 86,74 մեթր հեռաւորութիւն:



ՓՈՐՁԱԾ ԵՄ



Ուսփ պարել երկու հոգիով, կունակ կունակի, ձեր մէջքը գնդակ մը դնելով եւ առանց գայն գետին ձգելու:


Սենեակին շուրջը ընել գաւազանիկ մը ձեռքը եւ պզտիկ գնդակ մը գաւազանիկին վրայ:

Վերաբերու մը կամ ժլէ մը հակառակ կողմով



հաւաքարտէ պնակ մը մատին վրայ դարձնել, ապա՝ քիթին վրայ եւ, վերջապէս, ոտքին ծայրին վրայ:


Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյուքին ունեցող 6 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող 2 անձերը:



Ո՞ր պատկերը ամենէն աւելի կրկնուած է:



Կրնա՞ս գտնել այն պատկերը, որ միւսներէն տարբեր է:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ


ԿՈՎԵՐԸ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ «ԿԸ ԽՕՍԻՆ»

Կովերը, բոլոր անասուններուն նման, չեն խօսիր, սակայն անոնք իրենց յատուկ լեզու մը ունին: Անոնք կը հասնեն ձայներ եւ տարբեր տեսակի կեցուածքներ կ'ունենան: Ասիկա անոնց իրարու հետ հաղորդակցելու միջոցն է:

Րունակութիւնն են: Զուկերուն մեծ մասին պարագային, անոնց թիւը քանի մը տասնակի կը հասնի: Մինչ կոնիկաւոր ձուկերը (ինչպէս՝ շանձուկերը եւ կատուաձուկերը) փուշեր չունին, այլ՝ ոսկրային պզտիկ, տափակ կտորներ:

ԻՆՉՈ՞Ւ ԾՈՒՏԻԿՆԵՐԸ ՇՆԻԿՆԵՐԸ ԱՒԵԼԻ ՇՈՒՏ ԿԸ ՄԵԾՆԱՆ

Ասիկա կենսական հարց մըն է: Մինչ պզտիկ թռչունները կրնան իրենք իրենց առանձին հոգ տանել հաւկիթէն դուրս ելլելէն քանի մը օր, նոյնիսկ քանի մը ժամ ետք, բայց շնիկներուն աճումը կը տեւէ քանի մը ամիս: Պատճառը՝ Պզտիկ թռչուններու կեանքը անդադար վտանգի մէջ է, բազմա-



թիւ գիրատիչ թռչուններու եւ վայրի անասուններու պատճառով: Հետեւաբար անոնք պէտք է շուտ մեծնան եւ սորվին պաշտպանուելու ուրիշ անասունի մը փորին մէջ չզտնուելու համար:

ՄՐՑԱՆԻՇ

Գիտէի՞ր, թէ գոյու-թիւն ունի ջրային որդ մը, որուն երկարութիւնը կը հասնի 55 մեթրի:

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐԳԻԿԸ ԽՕՍԻԼ ԳԻՏԵ՞Ն

Հնէաբանները կը հաւատան, որ խօսքը գոյութիւն ունի առնուազն 100 հազար տարիներէ ի վեր: Նէանտրթալի մարդոց բրածոյ դարձած գանկերուն միջոցով գիտնականները համակարգիչի վրայ կրցած են վերաստեղծել անոնց ուղեղին ձեւը: Այս ձեւով անոնք փաստած են, որ նախապատմական մարդիկը օժտուած են խօսելու անհրաժեշտ գործարաններով:

Նէանտրթալի մարդուն կողորդին ձեւը եւ խնչափ փոզիլի զիրքը անոր կարելիութիւնը կու տային յստակ եւ լաւ արտասանուած ձայներ հանելու: Սակայն, հաւանաբար ան շատ դանդաղ եւ քիթէն կը խօսէր: Առաւել, ըստ երեւոյթին, ան անկարող էր արտասանելու ի, ու եւ հնչիւնները: Իսկ արգեօք անոնք ինչի՞ մասին կը խօսէին իրարու հետ: Ասիկա կը մնայ մեծ գաղտնիք մը:

ՔԱՆԻ՞ ՀԱՏ ՓՈՒՇ ԿԱՅ ՉՈՒԿԻ ՄԱՐՄԻՆԻՆ ՄԵՋ

Ասիկա յարաբերական է: Կան գլխաւոր փուշեր, որոնք ողններուն շա-

**ՀՈՎԱՆԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻՐԻԿԻՈՅ**

Մեծարանքի եւ Պարգեւատրման երեկոյ
Վաստակաւոր Բեմադրիչ եւ Դերասան

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ՝

**Կազմակերպութեամբ՝
Համազգայինի Լիբ. Շրջանային
Վարչութեան**

**Չորեքշաբթի, 15 Մայիս 2002, Երեկոյեան
Ժամը 8:00ին, «Կիլիկիա» բանգարանի
սրահին մէջ:**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԻԳԷՆ ԶԱԶԱՐԵԱՆԻ Գահատակութեան
տասնամեակին առիթով, հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 12 Մայիս
2002, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեց-
ւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան Ե. տարեկիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 12 Մայիս 2002, Ժիւնիէի Ս. Յարութեան եկե-
ղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱԹԵՆԻԿ ՄԱՐԿԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 12 Մայիս 2002, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ
մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹԱԳՈՒՆԻ - ՌԷՆ ԿԻՐՈՒՆԵԱՆԻ մահուան քառա-
տուցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի Կիրակի, 12 Մայիս 2002, Պուրճ Համուտի
Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան
Ժամը 10:00ին:

ՍԱՐԳԻՍ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցին
առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
Կիրակի, 12 Մայիս 2002, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ
մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱՔԵՍԱՊՅԻԱԿԱՆ...

Շարունակուած 4րդ էջԷՆ

պլազացումին հետ ստեղծ-
ծելով խորհրդաւոր եւ
սրտառուչ պատկեր:
Ապա՝ Դանիէլ Վարու-
ժանի բանաստեղծու-
թեան վաստակէն օր-
ւան պատշաճ հատ-
ւածներու բանաւոր ներ-
կայացումով պատանի-
ները նկարագրեցին
աղէտը, Հայրենիքին
փրկուածը. բայց նաեւ
անոնք արտայայտեցին
իրենց հաւատարմու-
թիւնը նահատակնե-
րուն, ազգային պահան-
ջատիրութեան եւ
Ազատ, Անկախ, Միաց-
եալ Հայաստանի տեսլա-
կանին: Պատանիներու
խումբը երգեց «Մենք
հայեր ենք» երգը:

կազմուած փոքր երգչա-
խումբը ներկայացուց
«Բամբ որոտան» խմբեր-
գր: Յարութեան Լնդեան
մեներգեց «Արտագաղթ»
երգը: Արտասանեցին
Յիմի Գիւրգենեան («Վի-
րաւորը», Դանիէլ Վա-
րուժան), Սեդա Արսլան-
եան («Անպատասխան
հարց», Գէորգ Էմին):
Ապա երիտասարդական
անդամները այս անգամ
Միամանթոյի բանաս-
տեղծութիւններէն քաղ-
ուած հատուածներով

առաւելաբար ընդգծեցին
հայրենեան հերոսական
խոյանքը, աղէտին
տխուր մեկնաբանու-
թեան առընթեր: Արեւմե-
տահայ բանաստեղծու-
թիւնը (Վարուժան եւ
Միամանթո) պատանինե-
րուն եւ երիտասարդնե-
րուն բերին մէջ հնչեց
խոր պարզամտ եւ սա-
հուն կերպով:

Հսկումը փակուեցաւ
տէր հօր պատգամով եւ
պահպանիչով:

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԶ

●Այս Կիրակի, 12 Մայիսին, միտքայ պտոյտ դե-
պի ԴԱՄԱՍԿՈՍ՝ Մտնայա, Մալուլա եւ Պլուտան
ամարանոցը, միայն 15\$:
●Համահայկական Բ. խորհրդածոցովի առիթով ՀԱ-
ՅԱՍՏԱՆ 24-31 Մայիս միայն 475\$:
●Ամեն շաբաթ Կիպրոս, Ռոտտու եւ 5 յունական
կղզիներ լւան ձաշերով 440\$, 8 օր:
Տե՛լ. 01-261177 - 240654 - 03-233978.
գիշերները 03-233978 - 01-258887:

You are invited to visit over 500 companies from 30 countries
at the largest construction exhibition in the Middle East

**PROJECT
LEBANON 2002**

THE 8TH INTERNATIONAL TRADE EXHIBITION FOR
CONSTRUCTION TECHNOLOGY, BUILDING MATERIALS
AND EQUIPMENT FOR THE MIDDLE EAST

14-18 May 2002 - BIEL, SOLIDERE
Open from 4:00-10:00 pm. For professionals only

Held concurrently:
ELECON MIDDLE EAST 2002
THE 7TH INTERNATIONAL EXHIBITION FOR ELECTRICAL ENGINEERING,
LIGHTING & SPA-CONDITIONING FOR THE MIDDLE EAST

STONE MIDDLE EAST 2002
THE 2ND INTERNATIONAL STONE AND STONE
TECHNOLOGY EXHIBITION FOR THE MIDDLE EAST

International Fairs & Promotions TEL: 01-263421/2/3/4/5 FAX: 01-261212 WEB: www.projectlbn.com

ANASTASIA AVIS DHL

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամա- ԳիճԻ Գ. ԳՅՂՈՒՄ ԳիճԻ Բ. ԳՅՂՈՒՄ

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00	լ.ն.
Քուեյթեան տինար	4922,42 - 4926,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2122,42 - 2126,24	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տիրիսալ	408,43 - 412,42	լ.ն.
Սէլուտական դիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան դիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան դիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կինէ	323,72 - 327,72	լ.ն.
Անգլիական սթըրլին	2201,70 - 2205,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	958,35 - 962,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2370,25 - 2374,35	լ.ն.
Ճապոնական հապար եէն	11,74 - 11,78	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	958,40 - 962,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	814,85 - 818,70	լ.ն.
Եւրօ	1368,16 - 1372,18	լ.ն.

● ՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 105,000 - 115,000 Լ.Ն.
Իրանեան մէկ ոսկի 91,000 - 101,000 Լ.Ն.
Օմանեան մէկ ոսկի 80,000 - 90,000 Լ.Ն.
Մեքսիքական փէտոս 474,000 - 498,000 Լ.Ն.
Մէկ քիլոկրամ
24-յի ոսկի 12,300,000 - 12,800,000 Լ.Ն.
Մէկ օնս ոսկի 308,64 - 321,68 \$
Մէկ օնս արծաթ 4,62 - 4,66 \$

● ՍՈԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
ԳիճԻ Ա. ԳՅՂՈՒՄ ԳիճԻ Բ. ԳՅՂՈՒՄ

Ա. կարգի	4 2/8	4 2/8
Բ. կարգի	4 4/8	4 4/8

Բաժնեթուղթ

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամաիշներու
փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
Եւրօ 0.904
Ֆրանսական ֆրանք 7.4287
Քանադական տոլար 1.5697
Գերմանական մարք 2.215
Հոլանտական ֆլորէն 2.4957
Ջուիցերիական ֆրանք 1.6093
Պելիքիական ֆրանք 45.685
Իտալական լիր 2192.83
Ճապոնական եւն 128.9
Շուեդական քրոն 10.2775
Նորվեգիական քրոն 8.3697
Դանիական քրոն 8.2175
Մէկ սթըրլին 1.4556

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic

ՇԵՆԱՏԵՍԻԼ

Թ. Է. Լ.
10:00.- Սապահո
13:00.- Մարտի
հանա
14:00.- Եւրոպայի
14:30.- Լուրեր
15:00.- Ֆիլմաշար
17:30.- Կենդանի
գծանկար
18:30.- Մանկական
19:30.- Լուրեր
20:00.- Թոթորի ուրբ
21:00.- Միջիսա
20:00.- Չէժէլ
23:00.- Արարական
յայտագիր
Է. Փ. Վ.
7:15.- Քիլիս
7:30.- Թէլէ
մաթէն
08:30.- Միւսի սրիտի
09:30.- Վիտէ կալ
10:30.- Քիլիս
12:45.- Է. Պ. Է. Է. Է. Է.
13:30.- Է. Պ. Վ.
սփորթ
14:00.- Փորձայ Ֆրանս 2
14:30.- Մի. Է. Է. իւրեր
15:00.- Միւսի Սիւսի
16:00.- Միւսի սրիտի
18:00.- @ Է. Պ. Վ.
19:00.- Պրէքիսի սր
մրճիչըն պրտ
20:00.- Արարեան լուրեր
20:30.- Հայաս
22:45.- Է. Պ. Վ. սփորթ
23:00.- Է. Պ. Է. Փէյթօֆ
Է. Պ. Ս.
7:00.- Մի. Է.
Է. իւրեր
7:30.- Կենդանի
գծանկար
09:00.- Մանուկներու
յայտագիր
10:30.- Նահարքում սպորտ
14:00.- Էսմերայտա
15:00.- Լուրեր
15:15.- Ճաք շոք մի
16:30.- Չէժէլի լիկ
18:55.- Հէյր սար
19:00.- Փէյթի Մուլիքա
20:00.- Արարեան լուրեր
20:35.- Նիլի կէպր
21:35.- Փառասոն
00:00.- Յուրպոլ
ՄՈՒՍԹԱՔՐԱԸ
7:00.- Լուրեր
9:00.- Այսմ
Կի Սապահ
13:00.- Տիէ Ինֆօ
13:05.- Տիւնի Ուրբ
15:00.- Լուրեր
15:30.- Նրս տաքիքա
16:30.- Յուրպոլ
18:30.- Մարզական
19:00.- Ալ ֆախ
20:00.- Արարեան լուրեր
20:30.- Ռոտտու
մուրախարիքա
20:35.- Լէյլէր Ուն
22:30.- Ամերիկ. յայտագիր
23:30.- Ազգային երգեր
Է. Պ. Է.
15:00.- Լուրեր
16:00.- Այս
մաշարէֆ ալ քարն
17:00.- Տնտեսական
17:30.- Սիւնեմ /35mm
18:00.- Արար. յայտագիր
18:45.- Միւսա
19:00.- Լուրեր
20:00.- Լիքա սիւսի
21:30.- Ռոտտու
22:00.- Այ մասաիյեա
23:00.- Թաքիք ալ ետում
23:30.- Մարզական լուրեր
00:00.- Լուրեր
Է. Պ. Պ. Վ.
7:30.- Էրիարթ
8:00.- Թոմ
Էստ ձերի
08:30.- Մանկական
10:00.- Լուրեր
13:30.- Սուրիական
ֆիլմաշար
14:30.- Լուրեր
15:00.- Մանկական
յայտագիր
16:30.- Մուլի
17:00.- Քիլի քիլի
19:00.- Վիտէ ֆէշըն
19:30.- Լուրեր
20:30.- Պէս սէլըր
21:30.- Տեղական
յայտագիր
23:00.- Ամերիկ. յայտագիր
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՌԱՅՈՒՄԻ
07:00.- Հայրուր
08:00.- Հայարից մէկ
08:30.- Գարուն է տրից
09:00.- Հեռուստատեսայ
«Սիրոյ կախարդանք»
10:00.- Հատարան

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5143

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ՇՈՒԻՉՈՒՄ	ՈՒՂԱՆԱՅԵԱՅ
1. Արեւմտար, վերջա- լոյս:	1. Մաստասեղ - Բուժ:
2. Գուլթան - Տարած- քի միաւոր - Յաւելում:	2. Արական անուն - Կոնարեթ մշտադալար ծառ:
3. Հոծ, թանձր - Միւս:	3. Պարտիզայանի կտրոց - Իրերայաջորդ տառեր:
4. Պատմիչ Ստեփանոս Տարօնեցի - Չորցուած անամէլ դոզում:	4. Կրկնուած բաղա- ձայններ - Առաջ- նորդ:
5. Պերճ Պոռչեանի վե- պերէն - Կրկնուած բա- ղաձայններ:	5. Պանթէն:
6. Գանկ, գլուխ:	6. Յաքան - Գա- նակ:
7. Մարզական - Թագ, պսակ:	7. Սողուն - Չուարթ - Արական օտար անուն:
8. Երկբարբառ մը - Գնդներու սայլ - Մտա- ծում:	8. Գալուստ - Երկ- րորդ:
9. Յաղթանակի պար- գեւ:	9. Մեծ Հայքի Տուրու- բերան նահանգի գաւառ- ներէն - Վէգ:
10. Տասը հազար - Կա- տու:	10. Զիրք, տաղանդ:

1 2 3 4 5 6 7 8 9 10
1 Ս Ս Ե Ղ Ն Ք Մ Ա Ն
2 Պ Ա Պ Պ Ե Ք Ի Ա Յ
3 Ա Պ Ս Ս Ա Ն Ն
4 Ա Պ Ր Ս Ա Փ Ն Բ Է
5 Ա Ր Ք Հ Ե Ր Ա Ն
6 Կ Ո Պ Ա Ն Ը Ժ
7 Ա Յ Ս Օ Ր Հ Ա Պ Ա
8 Ջ Ա Ս Ս Ս Ի Ր Ո Ղ
9 Մ Ր Տ Ի Մ Ն Ա Ս Ա
10 Գ Ի Լ Ի Զ Ա Ն Գ



ԹԻՒ 5142

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄ

(*) Վերոյիշեալ յայ-
տագիրները ենթակալ
կրնան ըլլալ որչ փոփո-
խութիւններու:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ը



Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍ

ՀԱՐԱԹԱՎԵՐՋԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Ազգային Լ. եւ Ս. Յակոբեան քոլեճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ պատերազմի մրցումները: Ծառաբավերջին անոնք բացառաբար տեղի կ'ունենան Ազգային Սուրբ Խանամիրեան քոլեճի դաշտին վրայ: Իսկ Կիրակի օր, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի կ'ունենան արեւելիկ մրցումները:

Ստորեւ՝ Շաբաթ, 11 Մայիսին տեղի ունենալիք պատերազմի մրցումներուն յայտագիրը.

- 4. Բ. Վ. - Քաղաքի Հայ Աւետ. քոլեճ (մեծ տղաք) ժամը 2:00ին ձեւարան - Կ. Բ. Վ. (մեծ աղջիկներ) ժամը 3:00ին
- Ս. Հոփսիսիւնեանց - Մեւրոպեան (մեծ աղջիկներ) ժամը 4:00ին
- Ս. Հոփսիսիւնեանց - Մեւրոպեան (մեծ տղաք) ժամը 5:00ին
- ձեւարան - Լ. եւ Ս. Յակոբեան (միջակ աղջիկներ) ժամը 6:00ին

Ստորեւ՝ արեւելիկի Ա. հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

- ԵՐԿԱՐ ՎԱԶՔ**
- 1000 ՄԵԹՐ ՓՈՔՐ ՏՂԱՔ
 - 1. Կիւլվանէսեան Պարոյր (Հայ Աւետ. Բ., Այնճար)
 - 2. Տօնիկեան Ռազմիկ (ձեւարան)
 - 3. Պոյաճեան Ռոպէր (Արգարեան)
- 1000 ՄԵԹՐ ՄԻՋԱԿ ԱՂՋԻԿՆԵՐ
 - 1. Մահա Մամօ (Մեւրոպեան)
 - 2. Պազայեան Չեփիտ (Հայ Աւետ. Բ., Այնճար)
 - 3. Առաքելեան Յոլի (ձեւարան)

- 800 ՄԵԹՐ ՄԵԾ ՏՂԱՔ
- 1. Տիշոյեան Մնջօ (Ս. Հոփսիսիւնեանց)
- 2. Փոյատեան Թորոս (Հայ Աւետ. Բ., Այնճար)
- 3. Օհաննէսեան Ղազար (Մեւրոպեան)

- ԲԱՐՉՐՈՒԹԻՒՆ ՅԱՏԿԵԼ**
- ՄԻՋԱԿ ԱՂՋԻԿՆԵՐ
 - 1. Հայկաբեան Լիւսի (Ս. Հոփսիսիւնեանց)
 - 2. Սվաճեան Նաթալի (ձեւարան)
 - 3. Մանուկեան Նանոր (Մեւրոպեան)

- ՄԵԾ ՏՂԱՔ
- 1. Գալանճեան Կարօ (Հայ Աւետ. Բ., Այնճար)
- 2. Մարգարեան Յարութ (Մեւրոպեան)
- 3. Պաղտասարեան Գառնի (Մեւրոպեան)

- ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐ
- 1. Թալալեան Շողեր (Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»)
- 2. Տէգեթիւնեան Ռիթա (Ս. Հոփսիսիւնեանց)
- 3. Օհանեան Ալիք (ձեւարան)

- ՄԵԿ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ**
- ՄԵԾ ՏՂԱՔ
 - 1. Մարգարեան Յարութ (Մեւրոպեան)
 - 2. Արզումանեան Էմանուէլ (Ս. Հոփսիսիւնեանց)
 - 3. Լեհիմճեան Ժորժ (Ս. Հոփսիսիւնեանց)

- ՄԻՋԱԿ ԱՂՋԻԿՆԵՐ
- 1. Ալեքսանտրեան Նարօ (ձեւարան)
- 2. Շահապեան Լարա (Ս. Հոփսիսիւնեանց)
- 3. Արզումանեան Շաղիկ (ձեւարան)

- ՓՈՔՐ ՏՂԱՔ
- 1. Խուրի Կարօ (Հայ Աւետ. Բ., Այնճար)
- 2. Մանուկեան Օշին (Ս. Հոփսիսիւնեանց)
- 3. Գարավարդանեան Կիրօ (ձեւարան)

- ԿԱՐԸ ՎԱԶՔ**
- 60 Մ. ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐ
 - 1. Տէքիրմէնեան Ռիթա (Ս. Հոփսիսիւնեանց)
 - 2. Օհանեան Ալիք (ձեւարան)
 - 3. Անանիսեան Ռիթա (Ս. Հոփսիսիւնեանց)

- 80 Մ. ՄԻՋԱԿ ՏՂԱՔ
- 1. Մայաճեան Քրիստ (ձեւարան)
- 2. Բալուճեան Յարութ (Մեւրոպեան)
- 3. Կիւլկիւնեան Ժիրայր (Ս. Հոփսիսիւնեանց)

- 100 Մ. ՄԵԾ ԱՂՋԻԿՆԵՐ
- 1. Տէքիրմէնեան Լիւսի (Ս. Հոփսիսիւնեանց)
- 2. Գուլումեան Սարին (ձեւարան)
- 3. Պոյաճեան Սեան (Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»)

- ԳՐՕՇԱՐՔԱԻ**
- ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐ
 - 1. Ս. Հոփսիսիւնեանց
 - 2. ձեւարան
 - 3. Մեւրոպեան

- ՄԻՋԱԿ ՏՂԱՔ
- 1. Ս. Հոփսիսիւնեանց
- 2. ձեւարան
- 3. Հայ Աւետ. Բ., Այնճար

- ՄԵԾ ԱՂՋԻԿՆԵՐ
- 1. Ս. Հոփսիսիւնեանց
- 2. ձեւարան
- 3. Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»

- ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ**
- ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐ
 - 1. Մարոնեան Ռիթա (ձեւարան)
 - 2. Թորոսեան Վիքի (Մեւրոպեան)
 - 3. Քենտրիճեան Չարուկ (Հայ Աւետ. Բ., Այնճար)

- ՄԵԾ ԱՂՋԻԿՆԵՐ
- 1. Պալեան Մարիա (ձեւարան)
- 2. Տէր Պետրոսեան Ալիք (ձեւարան)
- 3. Աղասեան Արաքս (Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»)

- ՄԻՋԱԿ ՏՂԱՔ
- 1. Խոշեան Գեղարդ (Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»)
- 2. Մենտիլեան Վարդգէս (Ս. Հոփսիսիւնեանց)
- 3. Քենտրիճեան Շիրազ (Գ. Կիւլվանէսեան «Յառաջ»)

ԱՆԳԼԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԱՅՍՕՐ՝ ՎԵՐՋԻՆ ԸԱՆԳՐՈՒԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 38րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, որոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան այսօր, ժամը 17:00ին (Պէյրուքի ժամով), հետաքրքրական պիտի ըլլան այն իմաստով, որ պիտի յստականայ փոխ ախոյեանին եւ Ա. դասակարգ փոխադրուող երրորդ եւ վերջին խումբին անունները:

2րդ դիրքը գրաւող Լիվըրփուլ, որ պիտի հիւրընկալէ Իփսուիչը (18րդ), այժմ մէկ կէտի առաւելութիւն մը ունի 3րդ դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտի վրայ, որ պիտի հիւրընկալէ Չարլթընը (14րդ): Յաղթանակի մը պարագային Լիվըրփուլ պիտի մնայ 2րդ դիրքի վրայ, յառաջիկայ եղանակին համար ապահովելով «Չէմփիընզ Լիկ»ի մրցաշարին իր տոմսը:

Կը կարծուի սակայն, որ Իփսուիչ քիչ մը դժուարացնէ Լիվըրփուլի առաւելութիւնը նկատի ունենալով, որ Ա. դասակարգ փոխադրուելու վտանգն տակ է: 17րդ դիրքը գրաւող Սանտըրլէնտ, որ պիտի հիւրընկալէ արդէն իսկ Ա. դասակարգ փոխադրուած Տերպի Քաունթին, հաստատութեամբ մըն ալ պիտի բաւարարուի բարձրագոյն դասակարգին մէջ մնալու համար: Նշենք, թէ ցարժ Տերպի Քաունթի եւ Լայսթըր Սիթի փոխադրուած են Ա. դասակարգ:

Արեւնայ - Էվըրթըն մրցումը թէն ալոքսան ալ կարեւորութիւն մը

ունի, սակայն 2001-2002 եղանակին վերջին հանգրուանին նախքան բաժակը ստանալը, վստահաբար, որեւէ խումբ կը փափաքի յաղթանակով աւարտել եղանակը: Բացի այս մեկէն, երկու մարզիկ վերջին անգամ ըլլալով պիտի կրեն լոնտոնեան կապիտէլի շապիկը: Թոնի Էտրմը շատ հաւանաբար լքէ ֆութպոլիստի իր սպարտէլը, մինչ Փաթթիք Վիէրա հաւանաբար իր կապով լքելով միանալ Ռէյալ Մատրիտի:

Նշենք, թէ առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը կը մասնակցին «Չէմփիընզ Լիկ»ի ֆութպոլի մրցաշարին, իսկ 3րդ եւ 4րդ դիրքերը գրաւող խումբերը՝ Կոմմի մրցումներուն: Իսկ 5րդ եւ 6րդ դիրքերը գրաւող խումբերը կը մասնակցին Է. Է. Է. Ֆ. Ա. ի ֆութպոլի մրցաշարին, որոնց կու գայ միանալու Պլէյպըրն, որ շահեցաւ Անգլիոյ ֆութպոլի լիկայի բաժակի մրցաշարը: Ստորեւ՝ 38րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

- Արեւնայ - Էվըրթըն
- Սանտըրլէնտ - Տերպի Քաունթի
- Ուէսթ Համ - Պոլթըն

ՖՈՐՄԱՆԸ 1

ՎԱՂԸ՝ ԱԻՍՏՐԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ճորմիւլա 1ի 2002ի աշխարհի ախոյեանութեան 6րդ հանգրուանը, Աւստրիոյ կրան փրին տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի: 71 չէփ ընդգրկուող եւ 307 քմ. երկարութիւն ունեցող այս կրան փրին կը սկսի ժամը 15:00ին, Պէյրուքի ժամով:

Երկուսն ոչ պաշտօնական փորձերուն ընթացքին, Տեւարիի երկու վարորդները՝ արաւիլի Ռուպէնս Պարիքելլօ եւ գերմանացի Միքայէլ Շումպերը յաջորդաբար գրաւեցին առաջին եւ երկրորդ դիրքերը:

Հակառակ անոր որ Շումպերը այժմ ամենայն հանգստութեամբ բնակած է վարորդներու ընդհանուր դաստիարակման պարագլուխի դիրքի վրայ, սակայն ան վաղը իր ամէն կարելին

կրան փրին: Նշենք, թէ անցեալ եղանակին ան գրաւած էր փոյ - փոյի-ըրի առաջին դիրքը:

ՌԱԺԱ ԱԱՍԻ ՀԱՍՏ.

ԱՊԱԿԵԱՅ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐ ՊԱՏՉԱՆՆԵՐՈՒ ԸՆՍԱՐ

Հիմա կրնաք օգտուիլ պատշգամեղ առանց օրէնքը խախտելու՝ զոց սենեակի ձեռով...
Անյայտաղ հեռաձայն՝

- Ներքին եւ արտաքին վարագոյր՝ կարով եւ տեղադրելով:
- Մոքթ - փարթէ - սթոմեր - Ռոլ ափ վարագոյրներ

Անթիլիս, Պիքֆայի մայր ձամբուն սկիզբը:
Ըեռ. 03 / 291281 - 04 / 520748

Ամմրցելի գիներ... Վատառութիւնը մեր նշանաբանն է:

ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԺԱՆԱՊԻ...

Նապիլ Ապտալլա Ժանապին, որուն հետ քննարկեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան բնագաւառներէն ներս երկու երկիրներու յարաբերութիւնները:

Տեսակցութեան ետք Ժանապի յայտարարեց, որ նախարար Յովնանեան կոչ ուղղեց քիւրեղացեալու այս ոլորտներէն ներս գործակցութեան տարազ մը՝ պատրաստակամութիւն յայտնելով այցելելու Պաղտատ եւ ստորագրելու այս իմաստով համաձայնագիր մը, օգտուելու համար մարպուլի եւ իրաւարարութեան մէջ իրաբեան փորձառութեան:

Իր կարգին, նախարար Յովնանեան ընդգծեց, որ Լիբանանի երիտասարդական եւ մարզական մարզերը վարձագնելու համար գործող նախարարութեան համար առաջնահերթութիւն է արաւական եւ միջազգային փորձառու կողմերու հետ շփումը, եւ այս ծիրին ներս անհրաժեշտ է իրաքի հետ կապերը մօտ օրէն ստորագրուելիք համաձայնագրի մը շրջագծին մէջ դնել:

ՖՈՒԹՊՈՒ. ԼԻԲԱՆԱՆԻ Գ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ Հ.Մ.Ը.Մ. Պ. Հ. - ԻՍԹԻՔԼԱԼ

Լիբանանի ֆութպոլի Գ. դասակարգի ախոյեանութեան 2. խմբակէն ներս տեղի ունեցող 3րդ հանգրուանի մրցումներուն, Կիրակի, ժուրիէի Քաղաքապետարանի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ. կը մրցի Իսթիքլալի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 4:00ին:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներէն կը սպասուի անպայման յաղթանակ մը արձանագրել, մասնաւորապէս որոնք նախորդ երկու մրցումներուն ունեցան բաւական լաւ խաղարկութիւն, սակայն պարտուեցան իրենց մրցակիցներէն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ. - ՍԱՖԱ՝ 1 - 3

Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան 25րդ հանգրուանի բացման մրցումին, երէկ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը 3 - 1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սաֆայէն (Կիսիաճա՝ 0 - 0):

Հակառակ անոր որ Սաֆա մրցումին մեծ մասը շարունակեց տասը մարզիկով, սակայն այդ առաւելութեան չկրցաւ օգտուիլ Հ.Մ.Ը.Մ. եւ կրեց եղանակի իր 18րդ պարտութիւնը: Սաֆա, որ արձանագրեց եղանակի իր 13րդ յաղթանակը, 42 կէտով կը մնայ 5րդ դիրքին վրայ:

Այսօր եւ վաղը տեղի կ'ունենան հետաքրքրական ճակատումներ: Հ.Մ.Ը.Մ. եւ Սիտ պիտի փորձեն յաղթանակներ արձանագրել, հետանալու համար վտանգաւոր գօտիէն: Հ.Մ.Ը.Մ. կը ճակատի Աիսա Աիլի Ալէյի դէմ, իսկ Սիտ՝ Պրժիի դէմ:

Վաղուան մրցումները եւս պիտի ըլլան կարեւոր, որովհետեւ տիտղոսին համար պայքարող երկու կապիտէլները՝ Նրժմէ եւ Սաճէս պիտի փորձեն որեւէ անախորժ անակնկալի առջեւ չգտնուիլ, երբ յաջորդաբար ճակատին Ռասիւնիկ եւ Շապապ Սահէլի դէմ: Երկու խումբերը իրարու նման արդիւնք արձանագրելու պարագային, ախոյեանին անունը պիտի վճռուի 26րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, երբ անոնք ճակատին իրարու դէմ: Ստորեւ՝ 25րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Աիսա Ալէյ - Հ.Մ.Ը.Մ.	4:45ին	Մ. Աւան
Սիտ - Պրժի	4:45ին	Պ. Համուտ
Անսար - Սալամ	4:45ին	Պէյրուք
ՎԱՂԸ		
Սաճէս - Շապ. Սահէլ	4:45ին	Պ. Համուտ
Նրժմէ - Ռասիւնիկ	4:45ին	Մ. Աւան
Ա. Սալտա - Թ. Սուր	4:45ին	Պէյրուք

ՃԱՏՐԱԿ

1

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՃՈՒՄՈՎ

ՃԻԿԱՆՎԱ Մ. - ՓԵՋԵԹՍ Ռ. (2002)

2

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՃՈՒՄՈՎ

ՋԱՈՒՍՅԱԺ Ժ. - ՉՄԵԼԻՆՍԵԱ Ս. (2002)

3

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՃՈՒՄՈՎ

ՎԵԼԻՄԱՍԼԻ Ֆ. - ՔԱՅԼՁ Ժ. (2002)

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐՃՈՒՄՈՎ

Ա. ՍԹԵՓՈՒԼԵԼԻԵՆԸ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

